

Երեւոյն

5-6

(212-213)
Մայիս-հունիս 2024

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏՈՒՄՅԱՆ-2024

Մայիսի 1-ին բանաստեղծ Արարատ Սկրտումյանի ծննդյան օրը, Ալավերդի քաղաքում տեղի ունեցավ գրական հանդիսություն, որին մասնակցեցին ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, «Արմավ» հրատարակչության խմբագիր Արմեն Ավանեսյանը, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը, ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ Մանվել Միլոյանը, «Արարատ Մկրտումյան» մրցանակաբախտության հանձնաժողովի անդամներ բան. գիտ. թեկնածու Վալերի Փիլոյանը, բանաստեղծ, թարգմանիչ Խորեն Գասպարյանը, բանաստեղծներ Գագիկ Սարոյանը, Ռոզա Գովհաննիսյանը, Սոնա Անտոնյանը և մրցանակի արժանացած երիտասարդ ստեղծագործողները:

Հնչեցին երաժշտական կատարումներ, ընթերցվեցին Արարատ Սկրտումյանի ստեղծագործություններից և ամփոփվեցին «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի սահմանած ամենամյա, հանրապետական, գրական, երիտասարդական մրցանակաբաշխության 2024 թ. արդյունքները պոեզիայի և արձակի անվանակարգերում:

Պոեզիայի գլխավոր մրցանակի արժանացավ Անի Ղազարյանը՝ «Ճաքը նռան շուրթին» բանաստեղծական ժողովածուի համար, իսկ Լոռու մարզի 10 ստեղծագործողների Գրաչուհի Լուսինյան, Միլենա Ղարիբյան, Վիլելտա Լապտևա, Երանուհի Գովհաննիսյան, Մարինկա Ռաֆայելյան, Սերիմե Սերոբյան, Գայանե Լամբարյան, Գրիգոր Պեպանյան, Նազելի Ավետյան, Մերի Մանուկյան, արժանացան խրախուսական մրցանակի և նրանց գործերը տեղ գտան «Լոռույան միջանցքներ» անթոլոգիայում:

Արձակի անվանակարգում գլխավոր մրցանակի արժանացավ Մարատ Սիրունյանը՝ «Կորսված երազներ» գրքի համար, իսկ «Ալեքսանդրներ» անթոլոգիայում տեղ գտան Լոռու և Շիրակի մարզերի 11 երիտասարդ ստեղծագործողների (Գովհաննես Կարապետյան, Էդիտա Գալստյան, Լիլիթ Սարգսյան, Սեդա Մինասյան, Լաուրա Զարուբյանյան, Հայկ Տեր-Սկրտչյան, Ռիտա Գովհաննիսյան, Անի Խաչատրյան, Արմեն Արշակունյացյան, Սյուզաննա Գալստյան, Լիլիթ Հակոբյան) գործերը:

Մրցանակաբաշխության հիմնադիր Արթուր Սկրտումյանի կողմից երիտասարդ գրողներին հանձնվեցին վկայագրեր, գլխա-

վոր մրցանակների արժանացած հեղինակներին նաև՝ Արարատ Սկրտումյանի դիմապատկերով հուշամեդալ:

ՀԳՄ նախագահ Էդ. Միլիտոնյանը գլխավոր մրցանակակիրներին հանձնեց Շնորհակալագիր:

88-ի երկրաշարժին զոհված 31-ամյա բանաստեղծ Արարատ Սկրտումյանի անվան հիմնադրամը ստեղծվել է նրա եղբոր՝ Արթուր Սկրտումյանի նախաձեռնությամբ՝ ի շահ հայ գրականության զարգացման:

Գրողներն այցելեցին բանաստեղծի շիրիմին և ծաղիկներ խոնարհելով՝ հարգանքի տուրք մատուցեցին նրա հիշատակին:

Ռոզա ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՅԱՆ ՊԱՊԸ

Մեռելոցի օր էր: Ես էլ շատերի պես ճամփա էի ելել Մեր Ննջեցյալների շիրիմներին այցի, երբ ճանապարհին հանդիպեցի մեր հեռավոր բարեկամներից մեկին՝ Օհան պապին: Քայլում էր դանդաղ, ձեռքերը կորացած մեջքին խաչած ու դրանցում ամուր պահած դաշտային ծաղիկների մի փոքրիկ փունջ:

-Բարի՛ օր, Օհան պապ, երբ երբ երբես մեռնակով,- մոտենալով ձայն տվեցի նրան:

-Աստու բարին, լա՛ն, - կանգնելով և իմ կողմ շրջվելով պատասխանեց նա: - Է՛հ, պառավիս մող է կերթամ, շուրջոց չմ գացերի, հիմա խռովուգ կեղնի, ժպտաց ու ցույց տալով ձեռքի ծաղիկները շարունակեց,- իդա լը ուր համար է գտանիմ. մըր բաղձից իմ քաղի: Պառավ ծաղիգ շաղ է գսիրիր,- լռեց ու հայացքն ուղղեց հեռուները. գուցե մոտ ու հեռու անցյալի հիշողություններն էր փորփում:

Միասին հասանք գերեզմանոց: -Օղորմի ձգի, հայեր,- հայացքը գերեզմանաքարերի վրա սահեցնելով շշմուշոց Օհան պապը:

Հասանք մեր ազգականների շիրիմներին ու նստեցինք Նրա կնոջ շիրմաքարի մոտ:

Մի քանի տարի առաջ էր, որ մահացավ Հայկանուշ տատը՝ Օհան պապի համեստ ու բարի կինը: Երբ որդին պատրաստվում էր շիրմաքարը տեղադրել, պահանջեց.

-Ձիմ նգար լը հանել կիդաս վըր էղ քարին:

Որքան փորձեցին ես պահել այդ մտքից՝ չստացվեց, իր մշե-



ցու չորկողությունն առած՝ իրենը պնդեց, թե իր նկարն էլ պետք է կնոջ նկարի հետ նույն քարին փորագրվի և ոչ թե իր մահից հետո, այլ այժմ: Եվ ահա մի մեծադիր շիրմաքարի վրա լուսահոգի կնոջ լուսանկարի կողքին նաև իրենն է, և այդ քարի վրա իրեն բաժին ընկած մատուն բացակայում է միայն մահվան տարեթիվը: -Շաղ օր ուզիմ, եղ լը կսիմ, հըմը Աստծուց հառեջ չընգնանք,- երբեմն այդ առիթով խոսք բացվելիս կատակում էր Օհան պապը, և թերևս միայն այսքանն էր ասում մահն արույցների ժամանակ:

Երկուսս էլ լուռ էինք մեր մտքերի հետ: Օհան պապը իր դողողոջ ու ցամաքած ձեռքերով բերած ծաղիկներն էր դասավորում շիրմաքարի մոտ և հանկարծ հազիվ լսելի ձայնով սկսեց երգել:

«Նոր լուսաբացին, արևից առաջ,
Հոտոլ էր փռվում սարն ի վեր կանաչ,
Արտոի չորս դին բացվել է կակաչ,
Տուն արի, յար ջան, արևուդ դուրբան:
Արևամուտին տուն արի, յար ջան,
Կոխտոգի չոբան, արևուդ դուրբան...»:

-Է, կնիգ, եղներ են քահել օրեր, առնեի մըր ուլ ու գառներ, ելնեի են բարձրիգ-բարձրիգ սարեր, ժողվեի սարի անուշ-անուշ ծաղիկներ ու հիրգնվա հեղ գեղ հիջնայի, դու լը ելնեիր ու շեմին կայնուգ իջեիր, թե գառներու հեղ սարեն քգի հի՛մջ եմ բերի... Է՛, պառավ, քու սիրո ծաղիգ շաղ է գսիրեր, մեզ լը բերեր իմ, ել, ել տես հավնի՛ս...»

Նստեց ինձ մոտիկ, ձեռքն ուսիս գցեց ու խոր հայացքը մտքերի հետ շիրմաքարերի վրայով տարավ հասցրեց արևից ոսկեգոծված լեռների կողմը... Հետո որոշեցինք անցնել մեր ննջեցյալ համադուղացիների շիրիմների մոտով ու մի-մի ողորմի շշմուշալ ամենքի շիրմաքարերին: Մի փոքր էինք հեռացել, երբ նկատեցինք,

որ մեր ազգականների շիրմաքարերին էին մոտեցել մի պատկառելի տարիքով կին ու երկու տղամարդ: Օհան պապը կկոցեց աչքերն ու ձեռքը տարավ ճակատին տեսնելու համար, թե ովքեր են:

-Օհո՛, են Սիմոնի Հասմիգն է, են էլ կա-չկա ուր տղերկ:

Լարեցի հիշողությունս մտաբերելու համար այդ մարդկանց, բայց ապարդյուն:

-Հիմացա, պապ,- մեղավոր ասացի ես:

-Շուրուց գեղ չըն արի, լա՛ն, ես լե հազիվ ճանճո՛ւ: Սիմոն գիս հրողպոր թոռ գիկեր, Հասմիգ լե Հայկուշի դասընդերն է եղի, ընոնք օր կարկվան, Հասմիգ իրենց առաջնեգով ծոցվործավ ու գեղեն քոճին, հեղո հիմաժվավ, որ Ամերիկա կաբռին: Կերևա՛ նոր ին գեղ էգի:

Կինն ու երկու որդիներն անցնում էին շիրիմների մոտով, կինը երբեմն համբուրում էր այս կանայն շիրմաքարի քարաքանդակ հայելին, ինչ-որ բան բացատրում որդիներին, և վերջիններս նույնպես հետևում էին նրա օրհնակին: Եվ ահա նրանք հասան Հայկանուշ տատի շիրմաքարին, կինը կռացավ և համբուրեց Հայկանուշ տատի, ապա նաև դրա կողքին փորագրված Օհան պապի նկարն ու գլուխը կախած ինչ-որ բան շշմուշալով առաջ անցավ, նույն կերպ վարվեցին նաև երկու որդիները:

Ես շփոթված տեսածիցս մի փոքր առաջ քայլ արեցի, ցանկանալով /չգիտեմ էլ՝ ինչպես/ կանխել թյուրիմացությունը՝ մտածելով, որ Օհան պապն իրեն վատ կզգա տեսածից: Բայց հենց այդ պահին, կարծես կռահելով մտքերս, Օհան պապը բռնեց ձեռքիցս: Ինչ-որ չարածճի դիմախաղ էր հայտնվել խիտ բեղերի տակ, Օհան պապը ժպտում էր...

-Լա՛ն, համեն մեզի բախտ չի բանա, որ տեսնա, թե ուր մեռնելուց հեղո իմալ է ուրին գիարգին, գպաղվին, ընոնց ըրածի մեջ վաղ բան չկա: Մե կես բերան օղորմիեն ի՛նձ վնաս, կսեն՝ օղորմի սաղ մարտուն լե կիդան,- երբ մի փոքր հեռացանք, առանց սպասելու ինձ տանջող հարցերին, պատասխանեց Օհան պապը:

-Ես գիտեմ, որ դու միշտ սի-

րով ես եղել Հայկանուշ տատի հետ, բայց արժե՞ր, որ դու դեռ ողջ-առողջ, նկարդ շիրմաքարին փորագրել տայիր:

-Իմալ սիրով չեղնեիք, լա՛ն, կնիգ մե օրվա համար չէ, կնիգ սրպուտյուն է, ընոր հաչկի լսի պես բոլի պահիս, թե չէ գխավի, լա՛ն, օջախիդ ճրագ գմարի... Պառավ ծոռություն ըրավ: Ես ծուռ հաշխարկ թողեց գիս, ու ինք մեռավ, ելը չուրի հսօր խռով ենք, օր ընձմե հառեջ հնգավ էղ անիրավ ու մեռավ: Բայց ելը ճամփորդ իմ, զիմ մե ող հուրա ի, մե ող հուրա՛ ուր մող, են աշխարհ... Կե՛տի, լա՛ն, գտեսնա՛ս,- Օհան պապը կանգնեց ու մատնացույց արեց մի շիրմաքար,- էղ քարու վրի գրուգ գտեսնա՛ս:

Իսկ քարի վրա փոքր տառերով փորագրված էր. «Խոնարհիր գլուխդ, անցորդ. այստեղ հանգչում է մի ողջ պատմություն...»:

-Գհասկնա՛ս, լա՛ն, իդա է կյանկ՝ մարտ կաբրի-կաբրի ու գղառնա մե բուռ հող, մե շիրմաքար ու էղ կյանկի պաղմուտյուն գղառնա էղ քարի վրա՝ էրգու թվերու հարեմք հնգուգ մե պղղիգ գիժ... Ձիմ ու պառավիս կյանք լը մեզ էր, լա՛ն, Աստված էրգուսիս լե մե օր կյանկ տվեց, հըմը առնելուց սխալվավ՝ ուրինն առավ, զիմ չէ: Ելը քարի վրա զիմ նգար լե հանել տվի, որ Աստված լե վերից իշե ու ուր սխալ հասկնա, տեսնա, օր Օհանն էս հաշխարկի հեղ ուր հաշիվներ փագե, պռձեր է, ու զիմ հոկին լե առնի, տանի Հայկուշ մող... Էն լե չէ, լա՛ն, իմալ գտեսնա՛ս... Ես օղորմած Օհան հլը կա ու կա...»

Այս օրը պիտի դաջվեր հիշողությանս մեջ ու տարիներ հետո Օհան պապի հուղարկավորության ժամանակ, երբ հարազատները հեթրով մոտենալով համբուրեին Օհան պապի շիրմաքարը, մտապատկերումս պիտի հայտնվեր այս օրը, ու ես, վերիիշելով եղածը, պիտի տխուր ժպտայի, և կարծես ի պատասխան դրան, Օհան պապն էլ իր քարակերտ պատկերից պիտի ժպտար իր մեղմ, անխռով ժպիտով... «Իդա է կյանք, լա՛ն...»:

Մարատ ՄԻՐՈՒՆՅԱՆ

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ամպերից պոկված մի հեքիաթ, Սեփր էր, թե՞ արցունք, չիմացա: Անձրևոտ գալուստդ հայարտ, Ծիածան էր, թե՞ կայծակ, չիմացա: Երաշտից հետո անձրև, Զողը բարի է, ծիլ կտա: Թռչված թևերս շփելով, Արևդ համբուրեցի ու անցա: Արևը խաբուսիկ է հաճախ, Ամպը կարկուտ է խոստանում: Երկի՞նքն է, դե՞ր է, թե՞ խաղ, Թե՞ սերն է քո վայրիվերում: Առածդ աստղեր էր, լույս գիշեր, Տվածդ՝ անհիմաստ մի պայքար, Մի անպաժին կամ անպաշտի սեր, Ու ծանրություն ուսերիս մի անպաքար:

Մի վերջին անգամ արի, Արի ու թույլ տուր թափ տալ Աչքերիս հոգնությունը քո ուսերին:

Թույլ տուր գրկել ու հավատալ, Որ սա բոլորովին էլ բաժանում է չէ, Ու որ ինքս չեմ այս դատարկությունը Տեղավորել կոկորդունս: Այն օրից ի վեր, Ինչ մաշկիս տակ ծաղկեցին կակտուսները, Հանգվեցի, որ սերը դու ես: ...Իսկ ես այդպես էլ սիրել չսովորեցի, Ես կարոտներս հետ քեզ էլ խեղդեցի, Ես սպանեցի սերը դեռ բարուրում: Մի վերջին անգամ արի, սեր իմ, Ու թե կարող ես, մինչ կզնաս, Հանիր ինձ իմ սեփական փլատակներից: Ցավում է հոգիս:

Ես քո անունն եմ պատմել Բոլոր ընկնող աստղերին, Հնգաթև յասամաններից, Երեքնուկներին քառաթերթ Ու ասիս թևած գատիկներին:

Իսկ բունբանգի խաթարված օրենքը Նետեց ինձ քո տիեզերքից, Կուլ տվեց երազանքներս Նվիրական յասամանի պես, Քո անունի հետ թևերս էլ պոկեց, Եվ դու, ափիս դաջելով Տիան հուշերի դրոշմը դեղին, Հեռացար անդարձ:

Եթե միայն իմանայիր, Թե քանի աստղ եմ վառել ու մարել քո աչքերում, Թե քանի կիսատ երազ է արթնացել, Երբ հանդիպել եմ հայացքիդ... Եթե միայն իմանայիր, Թե քանի գիշեր եմ հանկարծակի արթնացել Ու արտասվել կարոտից, Ինչպես ատամնացավից եմ արթնանում Զքնելու կանխորոշված նախապայմանով... Եթե միայն իմանայիր՝ Որքան գեղեցիկ ես ժպտում

Հուշերիս փոշուց անդին, Ու որքան խաղաղ եմ լսում ձայնդ աղմուկի մեջ... Եթե դու իմանայիր՝ Քանի՞ փողոց եմ թափ տվել ոտքերիս տակ Ու քանի՞ նստարան մաշել քեզ սպասելով, Քանի՞ արցունք եմ թաղել այտափոսերիս մեջ Ու քանի անգամ եմ կծել լեզուս արտասվելուց առաջ... Եթե միայն իմանայիր՝ Քանի անգամ եմ լռել, Մինչ քո առասպելն եմ էլի ուզեցել պատմել: Քանի անգամ եմ նախատել ինձ Քեզ սիրելու համար, Ու հետո սիրել նաև նախատինքս... Թե իմանայիր, Երդվում եմ, ինձ կզտնեիր անգամ Երկրագնդի հակառակ կողմում: Միայն թե իմանայիր...

Այս քառույթ մեջ, շրջապատյուտի Մի հայացք եմ հիշում ես միայն: Զգիտեմ՝ ինչպես ստացվեց, Որ ծովը քո աչքերում էր, Բայց իմ հոգին էր ալիքվում: Զեմ տեսել ոչինչ, երևի փոթորիկ էր: Մեջքիս քարերն եմ հիշում միայն, Ու թե ինչպես էր արյունը խփվում Մրտիս պատերին Ապառաժից բախվող ալիքների պես: Հիմա հստակ գիտեմ, Որ ոտքից գլուխ կյանք ես ու քառս, Աղետ ես դու ու փրկության օղակ, Եվ հիմա, երբ թևերդ բոլորել եմ մեջքս, Զգում եմ, որ փրկված եմ Ու խորտակված եմ մատներիս նման՝ Քո զանգուրների ալիքների մեջ: Զեմ լուզում լողալ սովորել, Թեկուզև խեղդվեմ քո կարոտի Ջրերի մեջ հանդարտ:



Իրաքահայ աներկաբանակ Մելքոնեան ընտանիքի կողմից լույս է ընծայվել Արա Նախաբարյանի «Թղթե երկինք» հատընտիրը, որը գրողի բոլոր ժամանակների ստեղծագործությունների հավաքածուն է, իր խոհերի ու ապրումների խոստում վկաները: Գրքում տեղ են գտել նաև գրողի հրապարակագրություններն ու խոսկումները՝ աշխարհի, կյանքի և հոգևոր փիլիսոփայության ծիրից ներս:

ՍԵՐՆ ԻՐԲԵՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Արա Նախաբարյանի սիրերգությունը

Սիրո ճանապարհը հոգու պատմություն է: Ինքնաճանաչման պատմություն: Ոչ մի տեղ մարդկային հոգին այնքան բաց ու ազնիվ չէ, որքան սիրո մեջ, և ինչպես գրում է Ուլյոթ Ուիթմենը. «Եվ նա, ով քայլում է գեթ մի վայրկյան անսեր, նա իր սեփական թաղմանն է գնում՝ սեփական պատանքով փաթաթված»:

Արա Նախաբարյանի սիրերգությունը, կին աստվածությանն ուղղված երկրպագության խոսք է՝ անմնացորդ ինքնայրում: Սիրային ապրումի բոլոր հոգեվիճակներում բռնկում սեր, բերկրանք, վայելք, սառնություն, մեղություն, ցավ, կարոտ-միավորող սիրո անփոխարինելիությունն է, նրա ամենագոր ուժը, հարուստ մշտանորոգ հույսը: Իր սերը Վահագնից ու Աստղիկից սերած ծիսակատարություն է, նույնքան անանձնական, որքան անձնական: Հանուն սիրո արժե նորից

ծնվել, այն էլ ծածուկ. Կծնվեմ նորից, հա, հա, կծնվեմ Թաքուն կծնվեմ, որ մահը չզգա...

Այս գրքում համանիշ եմ ապրել ու սիրել: Սիրո շնորհիվ է տունը վերածվում տաճարի, երգը՝ օրհներգության: Փոխվում է անգամ բիբլիական խնձորի խորհուրդը՝ ազատելով մեղքից այն միտում է դեպի անաղարտ՝ նույնացնելով Եվային, Լիլիթին, Աստղիկին իբրև կին, որ արժանի է երկրպագության:

Տուր ինձ խնձորը մեղքի մոռացման...
...Տուր ինձ խնձորը սիրո ապրումի
Կարմիր խնձորը խորհրդով վերին...

Պոետը կարող է ճախրել նաև մի թևով.

Ճախրելու համար մի թևն էլ բավ է, Երագի համար քունն էլ հերիք է, ... Մոմերն հանգցրեք, իմ լույսն ինձ բավ է...

Ներքին լույսից է ծնվում բանաստեղծությունը, և յուրաքանչյուրիս հոգում կարող է նույնքան պայծառ արև ճառագել, որքան երկնքում: Սերն է այդ արևը.

Երբ քեզ սիրեցի, դեռ արև չկար, Դու էիր հոգուս Արևը միակ, Երբ քեզ գրկեցի, դեռ լուսին չկար, Աստղերը չկային, դու էիր գրկիս...

Արդարև, ի սկզբանե Սերն էր: Սերը իբրև ծնունդ, մահ և հարություն համահունչ բնության օրենքներին՝ լուսաբաց, մայրամուտ, գիշեր, լուսաբաց և այսպես անընդհատ ու անվերջ:

Ամեն օր մթին մենք մահանում ենք Եվ ցայգալույսին հառնում վերստին, Ամեն օր մթին մենք ավարտվում ենք, Կրկին սկսվում վաղորդայն լույսին...

Պոետիայի թղթե երկինքը վանող է, բանաստեղծը պատռում է այն ու վրձնում մի նոր՝ իրենց երկուսի սիրո երկինքը՝

Ես պատռեցի հոգուս թղթե երկինքը մով Մի նոր երկինք վրձնեցի, Ուր դու էիր, ու ես էի այնտեղ միայն՝ Տիեզերքը մեր անսահման...

Գրքում սերը իդեալականացված է՝ ի հակադրություն արդի աշխարհում արդեն սովորական դարձած մարմնական առևտրի: Բանաստեղծն ստեղծում է յուրօրինակ մի դրախտ, ուր իշխում են ժպիտն ու գարունը, ուր տխրությունը ապրողներին չի վերաբերում.

Տխրությունդ դու թող դրսում ու ներս արի... Այստեղ խիճդ է ու ծիծաղն է այստեղ ծիծաղն... Տխրությունդ տուր մեռածին... Ու շուտ արի Ամահություն...

Սեռայների տխուր սովորները Անդրաշխարհից ելք չունեն: Եվ միայն խիճդ ու ծիծաղն է Ամահություն շնորհում նրան, ով սիրված է, ով ժպտում է, երբ լեցուն է սիրով: Ժպիտն օգնում է սիրած էակի մեջ գտնելու իրենը.

Խնդրում եմ ժպտա ժպտա, որ ասեմ Քո մեջ ինձ գտա...

«Մեզ վեր է տանում հավերժ կանացին»: Գերմանացի հանճարի խոսքին ունկնդիր Արա Նախաբարյանն ստեղծում է հավերժ կանացիի իր իդեալը: Սերն ուժեղ է մահից, ուստի և, պետք չէ հավատալ մահին, երբ կողքիդ է սերը: Երբ իրականություն է Հարությունը: Երբ իրականություն է նվիրումը իբրև կարողության մեծագույն արտահայտություն: Բացարձակ նվիրումը, որ Սերն է: Ամենուր և ամեն ինչում:

Արա ԱՐԹՅԱՆ
Բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ

ԵՐԲ ԶԵՍ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ...

Ճախրելու համար մի թևն էլ բավ է, Երագի համար քունն էլ հերիք է: Ապրելու համար մի կյանքն էլ բավ է, Սիրելու համար սիրուն էլ հերիք է:

Հիշելու համար կարոտը բավ է, Խոսելու համար բառն էլ հերիք է: Հոգու երկնքում փայլելը բավ է, Աղոթքի համար երեսին հանված խաչն էլ Դերիք է:

...Ծնվելու համար մի ծավն էլ բավ է, Բայց ծնվել չկա, պայքարը լավ է: Պատարագվելու կարիքը չկա, Խաչալի փայտին խոնարհում չկա: Թշվառ լինելու, անճար... Զեռքերը երկինք պարզելու համար, -Մեղա Տեր, փրկյա, ազատյա, օգնյա... ...Լո՛ւռ աղերսելով խեղճանալ չկա: ...Մոմերն հանգցրեք, իմ լույսն ինձ բավ է...

ԿԱՐՈՏԻ ԵՐԱԶ...

Երագս պատմեմ, լսեք Դուք, մարդիկ, -Մուք էր, աստղազարդ մի գիշեր հեռվում, Ու մի պարզ լուսին երկնքի ծիրում:

Վահագնիս տեսա, Աստղիկս գրկում, Անտրոտ՛ւնջ նստած Ծովակի ափին, Սեր էր երգում ու երգում կարոտ:

Պաղ հոգու ներսում Արև էր վառվում, Ու ջերմ ժպիտով Աստղիկս շողում, Իր սիրեցյալի հոգին պարուրում:

-Աստղի՛կս, գիտե՛ս, ոսկե ճակատդ Հիմա աստղերով պիտի զարդարեմ, Հոգուդ խռովքը լույսով պիտ մարեմ:

Եկ ու վերստին իմ մեջ դու ապրիր, Հոգուս կարոտը քո սիրով վառիր, Սերդ հավիտյան դու ինձ նվիրիր:

-Իմ Կրակ աստված, քեզ համար այսօր, Սիրո պատարագ պիտի մատուցեմ, Առանց քեզ ապրե՛լ... Ես պիտի չապրեմ:

Վարդերս սիրո ու սուրբ հավատի, Ոտքերիդ առաջ պիտի ընծայեմ, Ու փառքի դափնին քեզ արժան տեսնեմ:

Աստղերից պոկած քո կրակ հոգում, Կապույտ երկնքի Արևը վառեմ, Ու տաք համբույրով քեզ գիրկս առնեմ:

Ամուր փաթաթվեմ լուսե երագիդ, Ու լուռ արտասվեմ կարոտիս դողից, Մի նոր սեր ապրեմ, Սերը պահպանեմ:

-Աստղի՛կս, Հոգիս, իմ Սիրո երկինք, Ես սիրում եմ քեզ, դու իմ լույս աղջիկ, Իմ խռով հոգու իմ երա՛գ ծաղիկ:

Արի քեզ տանեմ մարդկանցից հեռու, Աստղերից վերև, երկնքից հեռու, Զար աչքից հեռու՛, չար մտքից հեռու...

Անհաս բարձունքին քեզ պահեմ սիրով, Որ սերդ ապրի հար ու անխռով, Որ սիրով ապրեմ մարդիկ այդ լույսով:


Փառաբանության ընծան մատուցեմ Վարդաջուր ցողեմ իրար աչքերի Ու սիրո երգի կարոտը առնեմ...

Ասավ ու առավ Վահագնը հսկա Կրակ ձեռքերի ափի մեջ վառվող, Աստղիկ Տիրուհուն իր գիրկը առավ Ու Ծիր Կաթինով անհետ հեռացավ...

-Իմ Սիրո Աստղիկ, իմհոգու կապույտ... Երկինքը լռեց, աստղերը հանգան...

Ու հուր հավիտյան ՍԵՐԸ ՃԱՌԱԳԵՑ:

Արա ՆԱԽՇԱՐԹՅԱՆ



ՈՒՍՏԻ ՃԱՍՓԱՆ

Երբեմն, երբ բառաշխարհի տաճար են մտնում, պիտի դրսում մաքրես ոտքերիդ փոշին ու երկնքին մայես, քանզի վերևի ու ցածի սահմանագծում կա զարմանքի ու հիացումի մի վարագույր: Այդպիսի զգացողությամբ մտա Նեկտար Սիմոնիի արձակի դաշտ, որտեղ արագզեղից Եղոտյի իրական կերտվածքն էր՝ շարափուն սեր, իմաստություն, պարզություն, հողապաշտություն, կայուն ընտանիքի գաղափարի օրինակելի և նվիրումի խորքային անմեկնելի տարածք: Հեղինակը, ի տես ժամանակի, ստեղծել է իր աղբի բարձրադիրը, մի գյուղացի միամիտ կնոջ, ով իր կերպարում ընդհանրացնում է մեր ազգայինը, հոգեբանական բոլոր պարզ ու բարդ պատումները, դառնում է բոլորի աղեն՝ իր կաթնաբույր, մեծ գրպաններով զոգնոցով և մշտակիր գլխաշորով: Այստեղ մի զարմանք կա, թե այդ ինչպիսի վարպետությամբ է Նեկտարը կարողացել վերարտադրել կուրորիտը, բարբառային անցումները, որ թվում է, թե անցյալից ներկա տեղափոխվելիս աղեն չի կորցրել իր շարժողականությունը, շնչավորվել է որպես տեսակ և տանում է ընթերցողին իր հետևից առանց ճիգի, բնական միանություն: Լուսի ու մութի խառնուրդից է ծնվում գրական մասն բարձրարժեքությունը և գալիս է՝ ասելու բառաշխարհին, եկա, ինձ տեղ տվեք...

«Իմ աղեն» պատմվածաշարի այս հավաքածուն յուրատիպ է իր ձևի մեջ և ազատ՝ խոսքային համեմատությամբ, գունային կոլորիտով: Եվ ինչու է ինձ թվում, թե հեղինակը երբեմն գրիչը փոխարինել է նկարչական վրձնով, իսկ կտավն անշրջանակ է, ազատ, մնալ Եղոտյի տեսակին: Կենդանական աշխարհի, խոստ ու ծաղիկի հետ խոսող, նրանց մարդկային կերպար դարձնող աղեն բնության հետ ներդաշնակվում է, դառնում նրա մի մասնիկը: Մարդկային կյանքը նույնացնելով կենդանականին՝ նա այդ կայսի պորտալարով մայրությունը հասնում է տիեզերքի շարունակելիություն: «Սիմոնիս պողիգ աղջիկ,- ասում է աղեն, կեղնի, որ մարդ իրա ստեղծածի վրա սիրահարվի: Վայթեմ կեղնի: Տիա կըտեսնիս՝ ես տան երևի մե՛ կորո հողը իմ պողիգ բայով փորփրեցի, ցորեն ցանի, հըմի էլ իմ արդի կողքից չեմ հեռենա: Լույսը կըբացվի, կաշեն, թե ինչքիս էլ կանանչ ծիւղերը կերպընդան, ու կըխտան իրանց հետ: Հողն ամեն մե՛ հաղիգի տունն է, հաղիգներն էլ էդ ծիւղերի մերիգներն են: Ըղոնք հողի տագը կուռնի, հետո կըճաքին ու կյանք կուղան իրանց ծիւղերին: Հեղո էլ օր օրի երեսի պես ողի գեկնին: Հիշե, հըմը կըրցան արնին ու քանուն դիմանալ,

իրանց մերիգները կամաց-կամաց կըդառնան հազար թելանի արմաղ ու հողն ըմբես կըզրգեն, օր մանդռ ծիւղերը ապահով վենձնան: Հիշե, բալա՛ ջան, հողն էլ սիրել գիղե, ուրացող չէ. փոս էրիր, սերմը հոգուդ կանչով դրեցիր մեջը, ինքը իր բարությունը ու առադությանը կըպարտասխանեք: Բալա՛ ջան, հողին բոլի միշտ սիրահարված արքիս»: Հետո շարունակում է. «Ծառի չորացած ծյուղերն օր կըվառնին, քնդրից անուշ հոդ գուկա. ըղիգ կանընչի հողն է, ըղիգ ծառի արմատի ու հողի հողն է, ըղիգ կյանքի հողն է: Բիլամ օր կըծխան, ինչքիս օր հեղո խոսան»: Աղեն անցել է իր Գողգոթան ազգային բոլոր ճակատագրական փուլերով: Մանկություն, անուսնություն, գաղթ. կորցրել է զավակներ, անհաշուրթ խոսում է պատերազմի, Հիտլերի, «սև թղթերի» մասին, որոնք չարագուշակ ազգավների բռնություն պատվում էին գյուղի գլխավերնում:

Ազգային որակներ կրող այդ մամիկն իր հիշողությունների սնդուկի կափարիչը միշտ բաց էր թողնում թռնուկով՝ Սիմոնի պատիկ աղջկա առջև, ով պիտի աղենպատումի յուրատիպ ճարտարապետը դառնար: Եղսոն սիրված կին էր. թեպետ հաշվել չգիտեր, նրա տաք մատներն էին ցուցանիչներ, բայց անվրեպ իր մտքերը պահ էր տալիս իր որդեգրին: Նրա հավաքական կերպարում կա մի անթաթույց հիացում: Կյանքի փիլիսոփայությանը նայում էր միամիտ մանկան և հատուն իմաստունի պես. հենց այստեղ է աղենական կերպի անսովորությունը: Թեպետ քաղաքականությունից ոչինչ չէր հասկանում, բայց խոսում էր ցարի անտարբերությունից, զարմանում, որ հայի հողի վրա հսկում է ռուս զինվորը: Սահմանային փշալարերին նայելիս կորստյան մեծ ցավ էր զգում, բայց քնքշանում էր հոգին Թունանյանի մասին խոսելիս՝ ենթագիտակցորեն վերարտադրելով նրա հանճարեղությունն ու զարմանալով, որ Թունանյանն այդքան լավ է հասկանում հասարակ մարդու ցավի խորությունը. նրան համարում էր իրենց գյուղի գավակ, ում համար չկա սահման ու աշխարհագրություն: Մեծ լռեցիցն դարձել էր Եղոտյի պաշտամունքը: Համեմուն էր հիշողությունները նաև կոմիտասյան պատառիկներով, երանգավորում իր անդաստանը մեծերի ներկայությամբ: Իր հող ու ջրի երկրպագությունն ունեցող աղեն սիրեր քաղաքը: Նրա համար իր գյուղ Բագրավանն աշխարհի կենտրոնն էր, միակն ու անկրկնելի: Ասում էր. «Ինչիս է պետք էս քաղաքը: Հեղեղ անձրևը գուկա, բիլամ հող չկա, օր ջուրը մե՛նք քաշե, ծիւ ու ծաղիկ ելին: Ասֆըտի վրա կկաթա, հեղո էլ չիփալով վիրև կըբռնի ու կըկեղդոտե արխըլուղիս փեշերը: Ըղուր հըմար էլ էս անտեր ասֆըլտի վրա ծաղիգ չի աճի»: Նրան դժվար էր կտրել իր արմատներից, որ տերևները նորից մնային կանաչ: Ամեն մի խոսքուն առկա էր կարոտի ցավը:

Նեկտար Սիմոնիի «Իմ աղեն» գիրքը մի չխամրող հայելի է, որտեղ յուրաքանչյուր հայ կարող է տեսնել նախնուն պատկերներ իր սեփական հոգու դիմագծերից: Լիիրավ կարող են ասել, որ ժողովածուն պատմության դասագիրք է՝ գյուղաշխարհի ճշմարիտ կտավներով, որոնք երբեմն համեմատում են հունորային շերտերով՝ սովորական առօրյան դարձնելով հասարակության կարեկրպ և գոյի մաքրամաքուր ձև՝ առանց

խաղ ու դիմակի: Սիրով և հիացմունքով են խմբագրել «Իմ աղեն» ստեղծագործաշարը: Բարի վայելում ձեզ:

ՀՈՒՓՍԻՍԷ

ԱՂԵՍ ՈՒ ՀԱՅՑ

- Սիմոնիս պողիգ աղջիկ, եղ հացն ուր կըտանիս՝ ձեռիդ մե՛նք ճիւղցնելով: Կարո՞ղ է գուզես թափես:

Ես նայեցի ձեռքիս պատառին: - Փորդ կուշտ է, ըղուր հըմար էլ վրեն չես դողա: Դու չե՞ս տեսնի՝ ես է՛ն գարու բոշկի վրա կըղնեմ, ճնջուղները գուկան կկտցեն: Ա՛խ, լուսս քոռնա: Մէ պաղմությունը ընգավ միտքս: Դե նստի կողքս, լսե ու անգըջիդ օղ էրա:

Ինձ մնում էր հնազանդվել:

- Բալա ջան, փախեփախի վախտ չիղեն արդեն քանի օր էր՝ եղ խեղճուկրագ էլը իրա ճռճան սելով մեզի կըտաներ, պաքը հա կըզարգեր մեջքին, օր առաջ էրտա. էմբես կեղներ, օր էլ կենդանին կկայներ իրա իշու խայսթով ու չէր էրտա: Մէ օրըն էլ սելի ակը ջարդել էր, պաքը ըստեղ-ընդեղ ընգած՝ հնար գուզեր էներ: Երեսեքս անոթի, ծարավ, մոր ծնված Սիմոնն էլ գրգիս մե՛նք: Արունս գոգնոցիս փեշը կըքաշե, կըսե. «Մարե՛ ջան, էլ չեմ դիմանա, հըլը ջեբերիդ մե՛նք աշե, բալքիմ մէ նշխարքըմ հաց էղնի»: Իմ երեսեքս օր ըղման ըսավ, ինչքիս օր սրդիս տունը քանդվե: Վիրև կաշեն, կըսեմ՝ ո՛ր էս, Երգնավոր, մէ թիքեմ հացի հմար էրա, բալքիս մէ կերբըմ փրգե: Մեզ էլ ուղեղից ուրդեղ մէ բանըմ միտքս ընգավ: Սիմոնիս դրի խողերի վրա, երեսեքս դուտիգիս վրա էին նստած, ըսի՛ հըլը ելեք: Ցուրտ, ող ու ձեռներս ինչքիս օր պաղ պուզ: Դուտիգս բացի, քրքրի, գոլա իմ ձեռով ասեղնագործած ճերմագ պողիգ թաշկինագս. Սուրբ Առաքելոց եզեղեցուց օր մշխար կըբերեյ, մե՛նք կըղնեյ: Ինչքան մշխարք կար, դրի երեսեքս լիզվեցերին: Ըսի՛ չժամեք, թող ձեր բերնի մե՛նք փափկի ու ձեզի ուժ տա: Մէ մարխիմ չափ մշխարն էլ մարդու կկշտացնե: Գուրգենիս օր տվի, ասեղին չափ բարակ, չոր թիքեմ ընգավ ողներին, եղի էլ իմ լիզվից դրի: Մեզ էլ պաքն էգավ, չիղեն որ մէ ծանոթից ազ էր ճարե: Մեր սելը նորից ճռռաց: Մի պահ թվաց՝ աղես իրական հեթիաթ է պատմում: Առանց ինձ նայելու՝ շարունակեց:

- Տես պաքը զարմացած մեզի կաշե: Ես ու իմ երեսեքս կըծպտանք: Չի հասկընա, թե էղ ինչ հրաշք է էղե: Ես անոթիքը լալու տեղը կըծպտան: Երեսեքս հավաղացին, օր կշտացան: Եղ գիշերը հեջ մեզը չլացավ, հարի առավոդ Գիրքերն ալուր ճարեց:

Ես նայում էի հրաշագործ աղենիս և ուշադիր լսում նրան: Այո՛, հավատը մեծ ուժ ունի:

- Սիմոնիս պողիգ աղջիկ, չմոռնաս ըսածներս. ամեն հացի կորը մէ մշխար է: Հացը ավելնորդ չի էղնի, հացը գեղին չքցես: Դու կըտեսնիս, օր ես հացը կըհավաքեմ, կըջորցնեմ արմի տագը, իմ հացիս սիմին էլ կըշողշողա: Հեղո էղ հացը կըլցնեմ է՛ն վենձ կաստուրգեն ու կըսպասեմ իմ Ֆիալկի հորթ ունենալուն: Հորթն օր կըծնվի, էղ օրերին ես իմ տան անասունին առըղվները հացով խաշիլ կուղամ: Չոր հացի վրա կըլցնեմ քիչըմ գուլ ջուր, Քիչըմ գարու ալուր ու կըղմեմ դեմը: Կուղե ու ընձի կաշե, մեզ-մեզ էլ գլուխը կըտմբսմբցնե: Օր թագ ծննդկան իմ Ֆիալկին կկթեմ, կաթից հացի հող գուկա: Առաջի

օրերի կաթը չի խմվի. շատ է յեղոտ: Եղ կաթից դալ կըսարքեմ: Ըղուրից էլ հացահոտ գուկա: Օր Ֆիալկիս հորթին գուզեմ կաթից կորեմ, իրան էլ հացի խաշիլով կըպայեմ: Հացը, բալա՛ ջան, մոր կաթի պես անարաղ է: Եղ ինչը՞խ անաստված ձեռ բոլի եղնի, օր հացը գեղին քցե:

Աղես երևի չգիտեր, թե ինչպես էին իր խոսքերն ականջիս օղ դառնում:

- Ինչքան էլ կուշտ էղնիմ,- մի պահ կանգ առավ ու շարունակեց,- աչքս հացի մե՛նք է, իրան կարոտ կըմնամ: Տիպ բարձիս տագը Մարիամ Աստվածածնի նկարն է ու մէ կտորըմ բոքոն՝ լավաշի մե՛նք փաթթած: Օր կըմղնիմ տեղաշորիս մե՛նք, երկուսին էլ կըպաշեմ, կըղնեմ դոշիս, աղոթքս կենեմ ու կըքնիմ: Առավոդը գեկնիմ թե չէ, մինաց իրանք գիղեն ինչ է գրած ճակտիս: Ես լուռ էի:

- Բալա՛ ջան, ամեն իրգուն, կիրագնամթին կըբացեմ հացիս դուտիգը, կաշեն դարսած հացերին ու փառք կուղամ Աստծուն: Ընձի կըսեմ՝ եղսո՛, դուտիգիդ մե՛նք բոլի հաց էղնի, օր սովածին թիքեմ հաց բաժին հանես ու մղածես, օր քու տան դռնով մարդն անոթի չբոլի անցնի: Օսկով չես կշտանա, բալե՛ս. ըղիգ պապղան խաղալիք է, օր մարդիկ չեն հասկընա: Հացն ու օսկին օր իրար կողք կըղնեն, անոթին կերտա դեբի հացը, կուշտը օսկին կըլցնե ջեբերը: Սիմոնիս պողիգ աղջիկ, կըհիշե՞ս՝ մէ օրըմ, օր հացի թիքեմ ընգավ ձեռիցս, ըսեցիր՝ Աղե՛, գեղնեմ: Հացն ընգած հացը չուղես. հողոտ է: Ես էլ մեղեցա վրեղ, թե էղ ի՞նչ կըխոսաս քեզնեմ դուս, ինչքիս թե հողոդ է, ընչի հողը կեղոդդ է: Ես իմ լավաշի կորըմ թափ տվի ու անուշ-անուշ կերա: Բալա՛ ջան, մեր Արագզեղն օր մերս հաց կըթխեր, կըսեր. «Եղսո՛, առաջի հացը տար մեր հարևան հիվանդ Սաթոյին. առաջի հացը բոլի հիվանդն ուղե, օր կըղնանա տեղից ելնի»:

Աղես ինձ էլ չէր նայում. կարծես մենախոսում էր:

- Աշունն օր կաշեն Սիմոնիս գլուխը կախ, գարանդով կըքաղե մեր ցորնի արդը, ինչքիս օր վրես խնդություն իջնի: Եգուց-մեզել օր էղ սրտուռ ցորենը ալուր կըսեղնի հացը: Ամեն գարուն Սիմոնիս կըսեմ՝ բալա՛ ջան, մէ թիքըմ հողը բիլամ առանց ցանել չթողնաս, էղ հողը տիրոջ տվածն է. օր սիրես, ինքը քեզի հաց կուղա: Մեր Արագզեղի արդի ցորենն օր կըհասներ, պաքը էղ ցորնի հասկերից խաչ կըսարքեր ու կկախեր պաղից հարի մեզել աշունքը: Հըմի էլ ես ըղման կենեմ ու կկախեմ հացատան պաղից: Սիմոնիս պողիգ աղջիկ, ուր էլ էրտաս, չմոռնաս մեր հացատունը: Ըստեղ մեր իրար վրա դարսած լավաշն է, էլ հեջ մէ տեղըմ ըսման բան չես տեսնի: Ես գուզեմ, օր դու հասկընաս, թե ընչի՞ թնդիրը հողի մե՛նք կըթաղեն. ըղման կենեմ, որդև թնդրի կավը ուժ կաննի հողից, օր լավաշը անարաղ եղնի: Հարի հաց թխել սորվա, քանի՞ ճամպ անցա: Օր պողիգ էի, մինաց գունդ կկրեյ, հեղո մերս ըսավ. «Եղսո՛, արդեն կըրնաս գողնակ էնես»: Ինչքան լավ կըզրգնեյ, ծերերը հաստ կըմնար. օր հարս դառա, արդեն ծերերն էլ բարագրի: Կխուրս թողեց, օր հացը թխեմ: Երեսեքս օր կըծնվեին, կխուրս մէ սաղլամ լավաշըմ կըղներ բարուրի վրա ու աղոթք կենե: Ինչ ըսեմ, բալա՛ ջան. եփ օր մեռա Աստծու կամքով, մէ թիքեմ հաց էլ կըղնեք ծոցս: Առանց հաց ճամպա ելնել չի էղնի. ով գիղե՛

բալքի մէ անոթիմ ելավ դեմս. թող բուռս լիքը եղնի:

Նայում էի աղենիս և չէի հավատում, որ գալու է մի օր, երբ նրա խաչված մոմե ձեռքերի մեջ թաշկինակի տեղ պիտի ծաղիկ լավաշ լիներ:

Հայկական լեռների կապույտ ծերպերին ծվարած գողտրիկ գյուղը՝ Բագրավանը, կրկին իր հյուրընկալ հարկի ներքո ընդունեց Նեկտար Սիմոնիին՝ նույն հող ու ջրի ծնունդ գրողին այս անգամ հարազատորեն սրբացած նրա աղբի մահվանից 40 տարի անց՝ յուրատեսակ պատարագ մատուցելու թռնուկու ձեռամբ. հեղինակի երրորդ ժողովածուն՝ «Իմ աղեն» վերտառությամբ, արդեն ընթերցողի սեղանին է:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի անդամները, գրողի գրչընկերները, հարազատ գյուղի մեծ ու փոքր կարոտով, ազգային երգ ու պարով (եւլույթ ունեցավ Բագրավանի դարոցի պարի խումբը) ընդունեցին իրենց զավակին:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը վկայագրով պարգևատրեց Նեկտար Ավդալյանին՝ հայ գրականության զարգացման, հայոց լեզվի, մասնավորապես՝ Կարմո բարբառի տեսության լավագույնս իրացման, ինչպես նաև մշակութային ու գրահրատարակչական ծրագրերի մեկենասության համար, իսկ գրքի խմբագիրը՝ Հռիփսիմեն, հեղինակին հանձնեց մեղալ՝ գրական գործունեության համար: Այնուհետև Ա. Կարապետյանը գիրքը ներկայացրեց ընդհանուր գծերով՝ շեշտելով. «Թվում է՝ այս գրքով մեկ շերտ ավելի էի մոտենալու հեղինակին, բայց, կարողավ այն, Նեկտար Ավդալյանին մոտեցա մի ամբողջ աշխարհով»:

Տերեկույթի բանախոսը՝ Բ. Գ. թ., դոցենտ Կարինե Մարտիրոսյանը, խոսելով Նեկտար Սիմոնիի գրքի առանձնահատկությունների մասին, պատմվածաշարի բազմաթիվ արժանիքների կողքին կարևորեց նաև գրքի տեղը հայ արձակի էջերում. «Արդյունքում շահուն է կարոտի գրականությունը՝ նորովի, թարմ լեզվամտածողությամբ, հատուկ բառաշերտով և, իհարկե, ժամանակին պահ տված, սակայն արդեն ուժացման վտանգի առջև հայտնվող Կարմո բարբառի Կարսի խոսվածքով»:

Արցախից բանաստեղծ Ռոբերտ Եսայանը գրքի արժանիքները բերում է մեկ բառածևով. «Պատմության կենսաթրթիռ տարրերն են՝ պատմողի անկեղծությունն ու բարբառային հարուստ կոլորիտը, գրողի պատկերավոր մտածողությունն ու լեզվի գունեղանգային արտացոլումները»:

Գրքի արժանիքների մասին խոսեց նաև արձակագիր Լարիսա Պետրոսյանը:

Տերեկույթի ընթացքում հեղինակը նույն մանկան սիրով ընթերցեց հատվածներ գրքից, պատմեց թրքերն ունեցեր: Երգիչ Հայկ Թոնգուլյանը իր անկրկնելի կատարումներով ապահովեց աղբի կռուկների ներկայությունը: Հանդիպումը հյուրեղ գեղարվեստական խոսքով անցկացրեց բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը՝ ամփոփելով. «Ասում են՝ Տապան հիշեցնող գրքեր կան, որոնց մեջ ինչ որ մտավ, անկորնչելի է: «Իմ աղեն», որ մեր աղեն է, այդ գրքերից է»:

որ տաք էր այնքան» կարոտալի զգացումներ են առաջացնում տեսանողի հոգում: Սոնան դառը պատումով անուշ հիշողություն է բերում քաղաքի, մարդու, սիրո դեմ, իսկ անծիրը («Անծիր») աղոթք՝ չգնալու, մնալու, միայն թափվող ձեռքերի ու զմայլանքի համար է, իր համար, որ քնի, որ գրի, և դեռան տակ քնած մահվան դեմ ու համար է, որ հեռանա: «Սոնա՛, ինչիս ես...» շշուկով հարցումը, «ցավդ տանեմ»-ը ինքնաբերական, ինքնահաստատման, ինքնավերագոտումի հիմները է:

«Գնացքի պատուհանից» շարքը ընթացքից, աշխարհն այլ կողմից ցավը, կորուստը, ծխացող վերքը ձևաչափելու անդրադարձ է զգայուն բանաստեղծի հոգում: Գնացքի սլացող ճանապարհը տարափոխիկ զգացումներ ու պատկերներ է բերում, և ընթերցողը, ճանփորդելով բանաստեղծուհու հետ, բացահայտում է տարբերույթ ապրումներ, ներսուզումներ, խոհեր, մտորումներ...

Շնորհիկ Շահինյան
արձակագիր

ՅԵՆԱՅՈՂ ՔԱՂԱՔԻ ՄԱՍՈՂ ԼՈՒՅԱԸ

Դադարի ու շարժումի հարաբերական ամբողջականությունը՝ իրավիճակային ընկալում: Սոնա Անտոնյանի «ես այդ փրկվածն եմ» ասելիքի նպատակն ու իմաստը բնորոշվում

են նշանային համակարգով, որն էլ բնութագրում է իրավիճակը: Գնացքի պատուհանը բանաստեղծուհու էության ինտելեկտուալ գեղարվեստական բնույթը դրսևորելու միջոց է, որը չնայած հստակ առօրեական կարգի իրողություն է հարուստ անկանխատեսելի իրավիճակային ազդակներով: Գնացքը նպատակի խորհրդանշանն է, պատուհանը՝ իմաստության: Երկուսը միասին բանաստեղծուհու դիտանկյուն է՝ նպատակային իմաստության գիտակցումով որոնումների տանող «Գնացքի պատուհանից/ճանապարհները հերարձակ են, / թե՛ ձեռք ձեռքի, ներհակ ու խենթ / թե՛ խոհական ու պինդ», երբ թվում է ոչ թե աշխարհի միջով ես անցնում, այլ աշխարհն է կողքովդ անցնում պատկերների շարանով, որոնք մեկը մյուսին փոխարինում են էկրան-համայնապատկերի վերածված գնացքի պատուհանին, ինչը պարտադրում է մտածել: «Այս ցավը չեղավող է, / այս ասքը՝ չասվող...»

Արցախ... ուր «Երկինքը լեռակ ու ալ է կաթում. Ծիրակ աշխարհս մխացող / վերք է» ու այս ամենը «Երկիրս / ծաղկանց եռագույնն է / կարմիրը խաշխաշի / տերեփուկը ծավի / անթառանգ գեղազարդ / և միայն / նարնջագույնը / նրա ծաղկի», որտեղ ամպամած առավոտին շալլարակ կարոտով «խատուտիկներ, / իմ երկրի կողմը թռչող / ջրերին մի հատիկ նետեցի / աչք ծովացավ / Սիրո վիճակագրության /

պես մի բան»: Այս համայնապարունի մեջ զուգորդվում են մտքեր ու զգացողություններ, որոնք արժևորում են մարդու գոյաբանական նկրտումները՝ վերապահելով այն նախապայմանական որակումների տարածքում «Գնացքի պատուհանից / միտքն անդադար է, / սիրտն անդադար է / թփերը, ծառերը / նրանց ծաղկավառնիքը դառն օշինդրի / մազութուտ ծաղկապսակները խոնդատի / աչքերումս, սրտումս / թաքցրած նշանները՝ նարնջի բույրով, / դիմազոները, շշուկները, / հիացումները անընդմեջ. / հիշողությունների թունդը, դառը՝ շոկոլադի, / որ մզում են մեզ՝ թաց, թե չոր / երբ առաջ ենք նայում, / երբ գնում ենք հուռթի սրընթաց / անդուլ թևաբաց / երբ գնացքի անիվները պեծպեծում են, / պատկերացրու՝ հրձվում ենք...»: «Գնացքի պատուհանից» բաժնում ուշագրավ է գնացքի պատուհանից երևացող պատկերների հաջորդականությունը, որն սկսվում է «Գնացքի պատուհանը փոշի է», ասել է թե կյանքը «... այն չէ / ինչ-որ կար դեռ երեկ / սա այն չէ / անցյալից ոչ մի տող»: Այնուհետև այն սկսում է կայուն հոգեկան կառուցիկ տրամադրությամբ զարգանալ՝ հասնելով օրինաչափ հանգրվանային տրամաբանության, և բանաստեղծուհին հայտնվում է փակ կրկնվող շրջանում, ուր ինքն է և աշխարհին բացվող գնացքի պատուհանը, որի հարափոփոխվող պատկերներում չի կրկնվում իր

նմանը. «Գնացքի պատուհանից / աշխարհը / կայարաններն է / ու սլացիկ: / Կառանատույցում ամեն անգամ / մեկը տոկում է», չնայած որ «Գնացքի պատուհանից / ծառերը կրկնվում են, / և նորից, / ամեն անգամ / ծառն իմ / անցնան է: / Ընթացքն է հիացիկ», որում միևնույնն է «Վայրկյանների, օրերի, / տարիների հետևում / սերը՝ զգայաչափ / ցավը դարձյալ մեծ...»: Սոնա Անտոնյանը քաղաքային կենսաստանագրությամբ բանաստեղծուհի է, և դադարի ու շարժման հարաբերականությունը նրա համար հենց ամբողջացում է ու կենսաձև ստանում քաղաքի կոլորիտային ծիրում: Սոնա Անտոնյանի սեղմագրված բանաստեղծությունները մտքի շնչառություն են հիշեցնում, երբ որպես ասելիք բանաստեղծությունը միանգամից օդի պես աննկատ շնչում է, սակայն ներսույնը այն երկար վեր ու վար էս անում, մինչ մտքերիդ արտաշնչումը դառնում է զգացողություն հնչ-որ բանի կամ ակնկալիքի: Քաղաքագիր բանաստեղծուհին գրում է. «ես հախուռն / զգացի քաղաքիս / խլրտոցը մեղվածայն / ծաղկող ծիրաններին / և գարունը լսեցի / Անդրանիկ Կարապետյանի / ալեհավաք ձայնից»: Լույս, թախիծ, մեմություն, հուզում, դիմադրում, տարածություն-ահա գյուրեցի բանաստեղծուհու գեղարվեստի քրոնոտոպի տարրերը, որը բանաստեղծություն է դառնում, վկայում

մարդկանց ու քաղաքի իրական ու այլախոսիկ անուններով. «Հիմա Գյումրիում անձրև է / կամ էլ հենց նոր դադարեց / մի պոետ / միայնակ սրճարանում / խմում է կապուչինո / ինձ հետ / իբր ինձ համար / ու մայուն է դուրս / ուղիղ Քըրք Քըրքոյանին / Աբովյան փողոցում է սրճարանը / «Իմ մասին»-ը / մերոնց ստիխների թեման է, / որ թարգմանել է Սայա Շերեմետևան, / պոետը Ռոզին է, օ՛վ Վարդը / (ասաց՝ մի ուրիշ ցող կիջնի վրաս...) / Մնացածը / թաց մայթերն են / ինքնանկուսացումը / թացն ու ավելի թանձրը / զարնան»:

Գյումրիում ու գյուրեցի աղջիկը միայն, որ ինչքան էլ նազլու լինի, կարող է իր խոսքը մինչև հաջորդ գիրքը ավարտել այսպես. «Հայր իմ, չասես՝ գոնե ինձ համար, / անհնար է ծառ լինելը, / մայր իմ, իսկ թրթռները, բառերը մեռնում են. / անհնար է դիմանալը, / գոնե հույսիդ սեգերը արևին ծուլ գան, հայրենիք, / վերքիդ զգույշ խեժ կաթկթան, / հավատարիմ հսկենք քեզ, / հավատիդ ոստերը, / տաճարիդ սյուները- / ծաղկունդ, թռչունդ, ընդվզումդ: / Առատ տեղումներ են / Հայր իմ, / Մայր իմ, / Հայրենիք»:

Հակոբ Հարություն
բանաստեղծ, արձակագիր



ԳԵՎՈՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆ-50

Անցնում է երիտասարդությունս՝ Միագիծ, միապաղաղ, Առանց խիստ հուզումների, ցնցումների, Առանց մեծ կրքերի, հիասթափությունների, Մեղքերի, ողբերգությունների:

Անցնում է երիտասարդությունս՝ Հրաշքների մեջ չհայտնված, Հեքիաթների չպատահած, Չարմանքի, զմայլանքի մերձեցումից չնվաղած:

Անցնում է երիտասարդությունս՝ Մետաֆիզիկայի հոսանքներով Այլ ափեր չբշված, Մոգության պարտեզներում Ծաղիկներ չհասունացրած:

Անցնում է երիտասարդությունս՝ Ինչպես լատինամերիկյան սերիալներն են անցնում, Ինչպես քաղաքական նորությունները, գովազդները, Լուրերը՝ տխուր և ուրախ: Ինչպես հիմա փայտն է անցնում Մեր վառարանի միջով դեպի վեր, դեպի երկինք, Բայց որպես ծուխ:

Անցնում է երիտասարդությունս՝ Տիեզերական քաղաքակրթություններից անտեղյակ, Աստղային ճարտարապետությունից անզետ:

Անցնում է երիտասարդությունս՝ Չուսումնասիրած վեդաները, Աստվածաշնչի Բանը չհասկացած, Դաոյի հանգստությունը և անգործությունը չապրած, Քրիշնայի վերանցական ժամանցներին անմասնակից, Բուդդա չդարձած:

Անցնում է երիտասարդությունս՝ Հայրենիքի հնձանում գինի չդարձած, Գրականության փեթակում Հաճախ բռնի վիճակով:

Անցնում է երիտասարդությունս՝ Ինչպես օրացուցային տոներն են անցնում, Ինչպես ամառուները, գատիկները, վարդավառները, Ինչպես պատանությունս անցավ, Ընկերներս, խաղերս, երազներս, Ինչպես ամեն ինչն է անցնում Այս երկրի վրա:

Ժամացույցի վայրկենաակաբին Փակցված է մի դեղին թիթեռ Թիկ-թակ

Վայրկյան-վայրկյան նա ծամծրանում է Թիկ-թակ Օրերից մի օր Տղաս կգտնի ժամացույցը Կպրկի թիթեռին Կկանգնի արեգդեմ Կապույտ երկնքի ներքո Եվ աջը կպարզի Թիթեռը կճախարի Թիկ-թակ Թիկ-թակ

Իմ մահվան օրը երկրպագուհիների զանգվածային ուշաթափություն չի գրանցվի համրապետությունում սգո օր չի հայտարարվի մախազահը ու վարչապետը հերթական ծաղկեպսակներով ու տխուր դեմքերով մեր տանը չեն հայտնվի դագաղիս մոտ սիրուհիներս ապօրինի գավակներս լեղապատառ լաց չեն լինի գրչակից ընկերներս ինձ աստվածացնելով երեք օր ու զիշեր պատվո պահակ չեն կանգնի գերեզմանս չի դառնա ուխտատեղի և կլոր ամյակներիս դպրոցականները բանաստեղծություններս սերտած ինձ չեն այցելի իմ անուցով հրապարակներ և փողոցներ չեն անվանակոչի նույնիսկ աշխարհի ավազահատիկներից հազար անգամ շատ աստղերից մեկը իմ անունը չի կրի

Նախնիներ ի վերջո ովքե՞ր եք դուք եղել ի՞նչ ժառանգական շղթայի մեջ եք ինձ կապել արյան ի՞նչ շփոթ եք իմ մեջ հեղել ախր ինչո՞ւ եք իմ մեջ ամբարվել ախր ինչո՞ւ եք իմ մեջ հորձանք տվել ախր ինչո՞ւ եք իմ մեջ կիզակետվել ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

ձեր արշավանքների դեզերումների քարտեզը որտե՞ղ եք թաքցրել ձեր գիտելիքների երազանքների

մատյանը որտե՞ղ եք թողել ի՞նչ տեսլականների ցանցով եք փորձել ապագան բռնել ի՞նչ պատկերացումների նիզակներով եք այն խոցել ես որտե՞ղ հուտոտեն ձեր վկայության հետքերը ես ի՞նչ նշաններով հասնեմ ձեզ ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

մի՞թե ձեզ որոնելու եմ իմ երևակայության շարունակ ընդլայնվող ու խորացող պարունակներում մի՞թե ձեզ որոնելու եմ իմ մտահանգումների ենթադրությունների հաջորդական առկայծումներում մի՞թե ձեզ գտնելու եմ իմ ներսույնումների ծաղիկի մոտ արթնանալիս մի՞թե ձեզ գտնելու եմ իմ պայծառացումների հեռաստաններն այցելելիս մի՞թե ձեզ գտնելու եմ անգիտակցականի բոցկլտացող շերտերին հավելիս ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

ինչո՞ւ իմ մեջ չեն գվվում ձեր աղաղակները պատերազմի ինչո՞ւ իմ մեջ չեն լալիս ձեր մրմունջները պարտության ինչո՞ւ իմ մեջ չեն արձագանքում ձեր երգերը հաղթանակի ինչո՞ւ իմ մեջ չեն գրնգում ձեր զորաշարժերը սրբազան ինչո՞ւ իմ մեջ չեն մխիթարվում ձեր հոգեվարքի ծայրերն ու ողբերը ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

քրմե՞ր եք եղել թե աստղագետներ ծովաեծներ՞ եք եղել թե ճանապարհի ավազակներ արքանե՞ր եք եղել թե ստրուկներ երկրաչափե՞ր եք եղել թե դահիճներ բժիշկներ՞ եք եղել թե կավատներ

թե՞ երգասացներ եք եղել թե՞ գրիչներ եք եղել թե՞ ճարտարապետներ եք եղել թե՞ տաճարներում զոհաբերողներ եք եղել թե՞ անապատականներ եք եղել թե՞ գորապետներ զինվորներ դասալիքներ եք եղել ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

ի՞նչ զազաններ եք որսացել ի՞նչ կենդանիներ եք պահել ի՞նչ շեներ ու քաղաքներ եք հիմնել ի՞նչ գյուղեր ու հայտնագործություններ եք արել քանի՞ բնաջնջումից եք փրկվել քանի՞ փախեփախ եք տեսել քանի՞ աղետից արհավիրքից եք ճողպարել որքա՞ն կոտորածներ նախճիրներ եք ինքներդ արել որքա՞ն պատերազմներ եք հրահրել ախր ես ո՞ւր եմ տանելու ձեզ

երբևէ ձեր երազներում

երևակվե՞լ եմ երբևէ ձեր աղոթքներում ուրվագծվե՞լ եմ երբևէ ձեր զոհաբերություններում ոգեկոչե՞լ եք ինձ երբևէ համուն ինձ գուշակություններ արե՞լ եք երբևէ ձեր գաղտնագրերում պահպանել-թաքցրե՞լ եք ինձ երբևէ մտածե՞լ եք իմ մասին ախր ո՞ւր եք առաջնորդում ինձ

ձեր անտեսանելի ու անհայտ գալարքներով ախր ո՞ւր եք տանում ինձ ձեր անլսելի սուլյերով ու ձայներով ախր ո՞ւր եք տանում ինձ ձեր անմեկնելի նվիրումներով ու թաքում կոչերով ախր ո՞ւր եք տանում ինձ

ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՅԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆ



Ալեքսանդրապոլի ճարտարապետական անկրկնելի դիմագիծ ունեցող կառույցներից է Չիթոդյանների առանձնատունը (պետ. ցուցիչ 7.14.353): Չիթոդյան չորս եղբայրները գաղթել են Արևմտյան Հայաստանի Չիթոդ գյուղից ու հաստատվել են Գյումրիում: Չիթոդյանները պատկանում էին հասարակության ամենաբարձր խավին և եղել են ամենահեղինակավոր առևտրական համալսարանի հարուստ անդամներ: Պետրոս Չիթոդյանը, լինելով առաջին գիլդիայի աստիճան ունեցող վաճառական, եղել է նաև բարերար ու բարեգործություններով խթանել է կրթական գործը: Չիթոդյաններն Ալեքսանդրապոլում իրենց բազմամյա ընտանիքի համար 19-րդ դարի 60-70-ական թվականներին սկսել են կառուցել ժամանակի ամենամեծ շահութաբեր տունը՝ սրբատաշ սև ու կարմիր քարերի շարվածքի ներդաշնակությամբ: Ընթացի շինարարությունը ավարտվել է 1872 թ., որը վկայում է արտաքին հանդիսավոր բակի կամարակապ դարպասի փակամաքարին արված փորագրությունը:

Տեղանքը, որտեղ նախատեսված է եղել կառուցել առանձնատունը, ունեցել է արևելքից արևմուտք իջնող թեք հարթություն: Այդ համաձայնեցված էլ պայմանավորված ճարտարապետը (վարպետ Հարություն Յուզբաշյան) տվել է առանձնատանն այնպիսի ճարտարապետական ու կառուցվածքային հորինվածք, որ շենքի արևելյան մասը կառուցվել է մեկհարկանի, իսկ արևմտյան մասը՝ երկհարկանի: Առանձնատան երկու թևերում գտնվող բնակարանների սենյակներն ունեն երկշար դասավորություն, կողմնադրված են նույնպես արևելք-արևմուտք և հյուսիսային մասում բացվածքներ չունեն: Ընթացի գլխավոր ճակատի վրա ուշադրության է արժանի երկրորդ հարկի կախովի մետաղյա պատշգամբը: Արևմտյան մասում առաջին առաջին հարկը բարձր թաղակապ նկուղ է ինքնատիպ կոնստրուկտիվ լուծումներով, որն ամբողջապես հատկացված է եղել խանութների և սենյակների մի մասը գետնատակ շարունակվում է մինչև տնտեսական բակի տակը, իսկ բակի կողմում կան մի քանի անցքեր, որոնք օդափոխության և լուսավորության նպատակով են թողնված: Բնակելի

տան արևելյան թևի հարավային ծայրում դալան-միջանցքի ձևով կազմակերպված թաղածածկ տարածության վերջավորության վրա անկյունաձև դասավորված աստիճանները տանում են ներքին տնտեսական բակը, որի վրա բացվում են երկու թևերի վրա դասավորված առանձին բնակարանների մուտքերը: Ընթացի ունի երկու ներքին և արտաքին բակեր: Արտաքին հանդիսավոր բակում կառուցված առանձնատունը կամայք է հաղորդում կամարակապ դարպասը, որը երկու կողմերից պարսպապատված է կրած մետաղական նախազարդ ճաղաշարերով: Այսօր Չիթոդյանների շքեղ առանձնատունը դարձել է Գյումրու ժողովրդական ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարան:

Չիթոդյանների տուն-համալիրի մեջ է մտնում նաև հայտնի քանդակագործ Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարանը: Առանձնատունը կառուցել է 1869 թ. Արևմտյան Հայաստանից գաղթած Մերկուրովների ընտանիքը: Ընթացի միահարկ է, և հարավային հատվածը կառուցված է սրբատաշ սև ու կարմիր քարերի սիմետրիկ համադրությամբ: Առանձնատան ամբողջ արևմտյան հատվածը մնացել է անավարտ, և սրբատաշ ճակատի փոխարեն կառուցվել է ցանցկեն փայտաբաց բաց պատշգամբ, որը յուրահատուկ է Ալեքսանդրապոլի ճարտարապետական ոճին:

Ավետիք ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆ ԱՅՍՕՐ

Գյումրին վերջին տարիներին դարձել է զբոսաշրջային կենտրոն, և բոլոր բնագավառներում քաղաքի այցելում ունի տեսնելու

յուրօրինակ մշակույթ՝ տարբեր դրսևորումներով: Եվ այցելության վայրերից էթե ոչ ամենակարևորը, ապա կարևորներից մեկը թանգարաններ այցելելն է: Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը այն կոլորիտային վայրն է, որտեղ այցելուի առջև բացվում է Գյումրու մշակութային պատկերը: Հայտնի տունը կառուցվել է հարուստ վաճառական Պետրոս Չիթոդյանի կողմից 1872 թ.-ին, այդ պատճառով էլ թանգարանը ժողովրդի շրջանում հայտնի է նաև «Չիթոդյանց տուն» անունով: 4 եղբայրները ծագումով Արևմտյան Հայաստանի Չիթոդ գյուղից, գաղթել են Ալեքսանդրապոլ և կառուցել են այս հսկայական առանձնատունը, որը համարվում է 19-րդ դարի ճարտարապետական գոհարներից: 1984 թվականից գործում է որպես թանգարան:


Թանգարանն ունի հարուստ ցուցադրություն: Այստեղ ներկայացված առարկաներից ու կենցաղային իրերից շատերը խոսում վկայում են դարաշրջանի և Ալեքսանդրապոլի մշակութային հարուստ ժառանգության: Ցուցադրությունում ընդգրկված են Ալեքսանդրապոլում առավել տարածում գտած արհեստները, հասարակական կենցաղն ու հոգևոր մշակույթը, հին Ալեքսանդրապոլի քարտեզն ու քաղաքի մասնաշրջանի քաղաքային կառուցվածքը: Թանգարանի ցուցասրահներում վերականգնված է նաև գյումրեցի արհեստավորի և ունևոր խավի բնակարանների ներքնատեսքը: Այստեղ կարելի է ծանոթանալ պատվասեր ու հյուրասեր գյումրեցու կյանքի անցած պատմությանը և ներկային:

Ժամանակին գյումրեցի հարուստ վաճառականի տունն այսօր դարձել է ամենագրավիչ և

ամենաշատ այցելություններ ունեցող թանգարանը Գյումրիում: Թանգարանում կատարելիք շրջայցը կբացի գյումրեցու հպարտության ակունքը՝ սկսած շենքի յուրօրինակ ճարտարապետությունից մինչև դարբնության վառ օրինակներ հանդիսացող մուտքի դարպասները, խաղողի ողկույզի նման վեր խոյացող պատշգամբը: Եվ Գյումրու դարբնության ավանդույթը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում ընդգրկելը մեկ անգամ ևս արժևորում է Գյումրի համայնքը, տոհմիկ դարբինների վարպետությունն ու գիտելիքը: Թանգարանում, բացի բուն ցուցադրությունից, իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է էլ ավելի աշխուժացնել կյանքը թանգարանում, ամրապնդել հասարակություն-թանգարան կապը: Ունենք դարձրական երեխաների համար նախատեսված կրթական ծրագրեր, որոնց նպատակն է երեխաներին ուղղորդել դեպի մշակույթը, հայ ինքնությունը, սեր և հետաքրքրություն առաջացնել մեր հոգևոր ու նյութական ժառանգության նկատմամբ: Թանգարանն այս կերպ փորձում է իր մասնակցությունն ու աջակցությունը բերել կրթադաստիարակչական գործընթացին: Նաև համագործակցում ենք Գյումրու Մտորումների թատրոնի հետ, և թանգարանում տեղի են ունենում ստվերային ներկայացումներ:

Թանգարանը, քայլելով ժամանակին համընթաց, մշտապես փորձում է նոր ուղիներ, ձևեր, մոտեցումներ գտնել, որոնք ուղղված կլինեն մշակույթ-հասարակություն-կրթական հաստատություն կապի ամրապնդմանը:

Քրիստինե ՊՈՂՈՍՅԱՆ



Ջարդարաններ

Սույա Խաչատրյան-Ստրալցկինե

Օրերս ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքում տեղի ունեցավ ՀԳՄ անդամ, բազմամյա գրող Սոնյա Խաչատրյան-Ստրալցկինեի վերջին տարիներին հրատարակված վեց գրքերի շնորհանդեսը մասնակցությամբ Շիրակի գրողների և Շիրակի մարզային գրադարանի և Գյումրու կենտրոնական գրադարանի աշխատակիցների:

ՍՈՆՅԱ ՍՏՐԱԼՑԿԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՐՉԻ ԵՎ ՈՂՈՒ «ՉԱՐԿԱՐԱՆՔՆԵՐԸ»

«Վիրավոր աղավմին», «Ջարդարաններ», «Շիրակի», «Շուղակուն», «Հեքիաթ Նարեկի և գրքերի թագավորի մասին», «Գարունը մանուկ է». սրանք Սոնյա

Ստրալցկինե-Խաչատրյանի վերջին հինգ տարիներին լույս տեսած ժողովածուներն են:

Գրքերը թե՛ արձակ, թե՛ չափածո ընդգրկում են ունեն, նաև՝ ժպիտներ, հանելուկներ, խոհեր, հագեցած լուսանկարներով, անձնական արխիվային նյութերով: Նոր գրքերում նաև ընթերցողին արդեն ծանոթ «Անիծվածը» ինքնակենսագրական հենքով վեպի հաջորդ երեք մասերն են հայացք սեփական ճանապարհին վայրէջքներով, վերելքներով, պարտություններով ու հաղթանակներով, երազների, խոհերի և մտորումների ենթատեքստում նաև՝ ժամանակի հասարակական իրադարձությունների նրբագծումով:

Ընդհանրապես՝ ճշմարտության, հավատի, ճակատագրի, սիրո և կին-տղամարդ հարաբերությունների, կյանքի, ազատ ճախարանքի թևեր ունենալու, կյանքի մտրակող հարվածներին դիմակայելու, ժամանակի անդարձ սլացքի, ազատության և իհարկե՝ Հայի մասին ստեղծագործություններ են:

Մեկ այլ դեպքում՝ մոզական ռեալիզմի արտահայտությամբ՝ հանուն արդարության պատիժն է յուրօրինակ: Ուղղություն, որն առկա է նաև հեղինակի այլ գործերում: Հերոսը ապրում է մի կողմից՝ սովորական կյանքով, գուցե փոքր-ինչ տարօրինակ, մյուս կողմից՝ հասարակ կնոջ մեկ օրն է՝ հեղինակի դիտանկյունից. երջանկության փնտրտուք՝ ամեն բացվող առավոտի հետ. «Միայն

թե գեղեցիկ կինը չգիտեր, թե ինչ է իսկական երջանկությունը»:

Հեղինակի «Ջարդարանները» նրա արած կյանքի հուշերն են, հիշողությունները՝ անցած-գնացած, որ բաց են, հասանելի, «որ զգվեն գնահատողին»:

Պատմվածքներում կյանքն է, մասնակիորեն իրական հենքով, ժամանակների տարբերությամբ՝ սերունդների տարբեր մտածողությամբ, սիրելու և ապրելու, ցանկությունների, երազանքների, նպատակների տարբեր կերպերով, ինչպես բնորոշ է բոլոր ժամանակներին: Համեմատություններ են տարվում նաև Հայաստանում հայեցի, և դրսում ոչ հայկական բարքերով դաստիարակված սերունդների միջև: Երբեմն թվում է՝ էթե մարդն ապրեր ուրիշ միջավայրում, ճակատագիրն այլ կերպ էր դասավորվելու. «Գուցե նա կդառնար տաղանդավոր նկարիչ, մայրս՝ երգչուհի, ու մենք ուրիշ կերպ կապրեինք»:

Բայց չէ՞ որ հիմնաբառն արդեն ընտրված է՝ «ճակատագիր». նշանակում է լինելու էր այնպես, ինչպես եղավ:

Կամ ինչպիսի՞ ծուղակում է մարդն ի սկզբանե. ըստ գրողի՝ «Մենք միշտ ծուղակի մեջ ենք. մեզ հետևում են այլմոլորակայինները»:

Գրքից գիրք հայտնվում են նրա հերոսները, ապրում իրենց կյանքը, շարունակում խոսքի տարիներ առաջ կտրված թելը, շարունակելով նաև ասես մի պահ ընդհատված կյանքն ու գործունեությունը: Եվ երբեմնի մանկա-

կան հերոսները արդեն հայտնվում են մեծահասակ ընթերցողի համար նախատեսված ժողովածուում, ապրելու նպատակով մնում է հար և նույնը. նրանք կրկին զբաղված են խաղաղ, ստեղծարար աշխատանքով:

«Գարունը մանուկ է», «Հեքիաթ Նարեկի և գրքերի թագավորի մասին» ժողովածուներում հեղինակի մանկական գործերն են: Արտաքուստ պարզ, մանկան միամիտ հայացքով պատմողի տողեր են, սակայն խոհերի թելը ձգվում է կյանքի մի դրվագից մյուսը, և ոչ մի նշանակություն չունի, թե, ասենք, հերոսների հոգում ինչ էր նա կատարվում, անձնական ինչ տառապանքների միջով են անցնում նրանք, միևնույն է, կարևոր լինելու, գոնե մեկին մի պահի հարկավոր լինելու ցանկությունն ու պատրաստակարանությունը մղում է ապրելու և արարելու, անգամ՝ երջանիկ զգալու:

Սակայն էլ ի՞նչ հեքիաթ, որ մի քիչ իրական չլինի, և ի՞նչ կյանք, որ գոնե մի քիչ հեքիաթի նման չլինի: Մի կողմից՝ սերն է մարդու՝ իր նմանի հանդեպ, դիմացինի հավատը ապագայի նկատմամբ, մյուս կողմից՝ հեղինակի մտորումներն են. «Երջանկությունը չէն գտնում, այն ստանում են», «Ամեն մարդ իր կյանքի տերն է...» և այլն:


Գրողն այս ուղին է ընտրել՝ հավատի և բարության հունդեր ցանցելով մանուկ ընթերցողների հոգում: Եվ ամենին էլ պատահական չէ, որ մանուկների

հասցեագրված գործերում նա շոշափում է բոլոր թեմաները, որոնք վերաբերում են մարդուն մեծ առունով. չէ՞ որ այստեղից է ակունքվում անհատի տեսակի ձևավորումը, այսպես է հունցվում երեխայի մաքուր էության ճշմարիտ խոհը: «Մարդը միշտ երազել է թռչել, միշտ ձգտել է ազատության և վեհության», իսկ խորագիր հարցի մեկնակետ-պատասխանը. «Թռչունները մահանում են օդի մեջ՝ թռչելու ժամանակ»:

Խոսքն ընդհանուրից մասնավորեցնում է մի կողմից՝ իրականության երեխայի գնահատումն է. «Ես մեծերին չեմ հասկանում...», մյուս կողմից՝ նույն մանկական մտածողությունը, թե ինչու իր կողքին մեծ տատիկ կամ պապիկ չկա: Եվ ասես մեծ կյանք՝ փոքրիկ մանկություն բանաձևով գրողն ամփոփում է. «Ո՞վ է ասում, թե 21-րդ դարում Մխիթարյաններ չկան: Կյանքի անտեսանելի սանդուղքները իջեցնում ու բարձրացնում են մարդկանց»:

Բանաստեղծությունները նույնպես թեմատիկ լայն ընդգրկումով են՝ Հայոց աշխարհի, բնության զարթոնքի՝ բանաստեղծական արարումներից մինչև կարոտ՝ լայն առումով: Չափածոն ընդհանուր առմամբ՝ երկնքի հետ էներգետիկ կապն է հեղինակի մերթ երազ-երազանքի, մերթ բանաստեղծության տեսքով «Այսօր երկինքը իմ հոգու ճիչն է...» ընդհանրացումով:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան . գիտ. թեկնածու, դոցենտ



Վյաչեսլավ Կուպրիյանով. ռուս բանաստեղծ, թարգմանիչ

Ծնվել է 1939 թվականին, Նովոսիբիրսկում: Ավարտել է Մոսկվայի արտասահմանյան լեզուների մանկավարժական ինստիտուտի թարգմանական ֆակուլտետը: Ինստիտուտում ստեղծել է «Ֆոտոն» գրական միավորումը: Թարգմանել է բանաստեղծություններ գերմաներենից, անգլերենից, ֆրանսերենից և իսպաներենից (առանց տողացի թարգմանությունների), մասնակցել է նաև հայ և մերձբալթյան ժողովուրդների պոեզիայի թարգմանության գործընթացին: Կուպրիյանովի ազատ բանաստեղծությունները թարգմանվել են աշխարհի ավելի քան 40 լեզուներով:

ՎՅԱԶԵՍԼԱԿ ԿՈՒՊՐԻՅԱՆՈՎ

ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԼԻՎՅՈՐ ԵՆ ԳՈՎԱԲԱՆՈՒՄ

Մի գավաթ հայտնի չինական լիկյոր լինելու Ռուսական օդով բաժակ զարկել գնալով Մեծ Պուշկինի ազնիվ կենացը վկայեցե՞ք բանականությունը եվ են կցանկանայի որ երկրորդը հսկվեր Լաո Ցզիի կենացը երբ նա բաժակ է բռնած Մեծ Կոնֆուցիոսի հետ Իմաստունների և սելեստիալների ուղու միասնության համար խմելիք երկրի և երկնքի մերդաշնակության համար ես կցանկանայի խմել երրորդը Լի Բոյի հետ երբ նա կենացն է Դու Ֆուի Գետերի և ծովերի և լեռների և հովիտների միասնության համար խմելիք Կոնֆուցիոսի Բուդդայի և Լաո Ցզիի Բարեկամության համար Մեր ռուս Քրիստոսի հետ

Ես կխմեի չինական լիկյոր քաղցր եվ դառը օդի ռուսական Բոլոր ժամանակների բանաստեղծների ազատ եղբայրության համար Կխմեի Քանգի ի վերջո նրանք բոլորը միասին գրում են նույնը Փոփոխությունների Մեծ Գիրքը Դեպի Լավը Փոփոխությունների Գիրքը:

Օ՞, ՕՍԻՐԻԴ ԼԻԾ

Բանաստեղծ Սլավա Դինոսկին

Մակեդոնիան Ձեռքի իր ափերի մեջ օրորում է Օխրիդ Լիճը Տաճարների զգաստ Յակոբյանցի ներքո Բայց ո՞ր է փախչում նա Դեպի Չարա՞վ Չարավային Մակեդոնիա Որ հագեցնի ծարավը Ալեքսանդրի հեծելազորի Նախքան նրա շոգ Չարավ արշավելը Որպեսզի բրիտանացիների համար Չնդկաստան հայտնաբերի Կան ավելի հյուսիս՞ Սերբիայի և Չեռնոգորիայի միջով Եվ ավելի Արևմուտք Որտեղ եվրոպան ավելի ու ավելի է ձգվում Մինչև սառը Չյուսիսային օվկիանոս

Օ՞, Օխրիդ լիճ Ես կտանեի բարձր քո մաքուր գավաթը Ձեր վանքերով և տաճարներով երիզված Դեպի արևելք դեպի Բայկալ լիճ Իր բուրդայական վանքերի երիզներով Որպեսզի նրանք խառնվեն իրար արևի մակարդակում Խաղաղ ալիքների ջրերում Չանգակատան Վսեմ գանգերի ղողանջների ներքո:

09.03.2023

ԿԱՏՈՒՆ ԴԱՎԱԴՐՈՒՄ Ե ՄՎԱՆ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատուն դավադրում է մկան սպանությունը Մտովի քնքուշ շոյում է նրա գլուխը Խտղտացում է նրա թևատակերը Չարմանում է թե ինչու նա չի ծիծաղում Ես փորձում է ավելի լավ գննել նրան Չամոզվել որ նա նույնպես նկատել է իրեն Մուկը հասկանում է որ պետք է նրանից վախենա Ես կցանկանար հնարավորինս նրբորեն սպանել մկանը Ես զարմանում է թե ինչո՞ւ նա դեռ չի լալիս Կատուն մտածում է թե ի՞նչ է լինելու հետո Ո՞րն է այս հեշտ սպանության իմաստը Բացի այն որ նա կարող է դա անել Ես սկսում է հավատալ իր նենգությանն ընդառաջ եկող Մկան ներկայությանը Ես հասկանում է որ մուկը հաստատ գիտի թե նա ինչ պետք է սպասի այս հանդիպումից Քանի որ կատուն ծրագրում է սպանել մկանը Եվ մինչ կատուն մտածում է արդեն կատարված սպանության մասին

Մուկն այդպես էլ չի հայտնվում և դեռ ապրում է այս լույս աշխարհում:

09.03.2023

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Կյանքի քարտեզանդ ուղիներում Ցաքուցիր ընկած են իմ հնամաշ Դարոցական դասագրքերը Եվ ես հուսահատ մոռանում եմ Այն ամենը ինչ ես չէի կարող Սովորել առանց նրանց Որ ջուրը ցրտից սառչում է Եվ նրա վրայով արդեն կարելի է քայլել Որ գոլորշին վերածվում է եղյամի Եվ անճամաչելի են դառնում ծառերը Եվ որտեղից ես կարող էի իմանալ Որ բացի չորս անգամ չորսից Կան նաև երևակայական թվեր Որ սահմանում են մեր կյանքի իրական ժամանակը Որ բացի ցածր դասարանների պատմությունից Կա նաև բարձրագույն պատմություն Ոչ թե այն ինչ տեղի ունեցավ ինչպես եղավ Այլ այն որ պետք է լիներ Եվ կա նաև բարձրագույն աշխարհագրություն Բնակեցված երջանիկ երկրներով Որոնք երջանիկ են նրանով Որ սահմանակից են միմյանց Եվ կա ավելի բարձրյալ աստղագիտություն Որտեղ աստղերը շրջված են գլխավայր Եվ նրանցից տարվա ցանկացած եղանակի Ամանորյա ծյուն է թափվում Եվ ծածկում է Իմ մոռացված բոլոր Չնամաշ դպրոցական գրքերն ու Քարտեզանդ կյանքի ճանապարհը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՆՃԱՆԸ

Որքան այս ամենը մոտ է Եվ սպանում է հյուսվել Պատմության ձգված մեկ օրվա հանգույցին Գերմանացիներն արդեն Մոսկվայի մատույցներն են հասել Իսկ ֆրանսիացիները Մոսկվայից չեն հասցրել հեռանալ Բայց այն հասցնում է վառել Դրիմի խան Թոխթամիշը Այնպես որ լեհերին ավարից շատ բան չի հասնում Բոլոր հպարտ կեղծո՞ղիտրիներով Այնուամենայնիվ արդեն մայրամուտին Փորձառու ամերիկյան ավիակիրները Պատրաստ են խանգարելու Ուշակովին Թուրքական էսկադրիլիան ուղարկելու Միջերկրական ծովի հատակներ Իսկ արևմտյան սլավոնները Աքս Իգորի Գնդի մասինը Չանասիրաբար թարգմանում են Պոլովցիների և պեչենեգների լեզուներով Չույս փայփայելով հարություն տալու մի օր Վայրագ քոչվորների քնած հորդաներին:

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Երևացող աստղերից Մեկը

Չավանաբար Արևը Մեզ ավելի մոտ է Քան մյուսները

Եվ չի հեռանում Ծածկվում է Նորից ծագում Չավանաբար Ինչ-որ բան գտնում է Չենց մեր մեջ

Բայց հեռավոր ուրիշ աստղերը Ինչ-որ կերպ մեզ Միևնույնն է Շրջանցում են Չավանաբար Նրանց աշխարհը Մեր աշխարհը չէ

ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Մարդն այս անդեմ երկրի վրա Շատ երկար է նայել երկնքին Վերահաշվարկել է բոլոր համաստեղությունները Եվ գարմացել է նրանց կենդանական անուններով Քանգի երկրի վրա դեռ կենդանիներ չկային Մարդը ձեռքերը պարզել է աստղերին Եվ ձեռքերը խոնարհել է գետնին Եվ մարդու միջով նրա մարմինն ի վար գազաններն ընկնում էին գետնին Արջերը առյուծներ կետեր և շներ Արծիվները կարապներ և գիշատիչ ձկներ Այսպիսով մարդը ցանկանում էր ջերմացնել երկինքը Բայց ինքն էլ բնավ չհասկանալով հայտնվել է վայրի գազանների վայրագությամբ շրջապատված Նրա մեղքով սակայն որ լքեցին իրենց երկինքը Բնավ սեր չտածող մարդու հանդեպ Այդ ժամանակից ի վեր մարդը փորձում է ապարդյուն Գտնել գազաններին երկինք վերադարձնելու ճանապարհը Խոնարհվում գետնին և դեպի երկինք է պարզում ձեռքերը Բայց գազաններն արդեն ավաղ հարմարավետ բնակություն են հաստատել մարդու ներսում Որտեղից այնքան հարմար է հարձակվել մեկ այլ մարդու վրա:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրքերը վառվում են աստղերի պես Անօդ տարածության մեջ Ընթերցողի ակնկալիքով Նրանց համար հող են մշակում Գրքերի հետախույզ սերունդները Չայտնության սերմերը Գետնով հողի մեջ Որոնք կան կեղծքոջեն Չամառ բառերի փշոտ հասկերով Կան էլ կմոլորվեն խոնավ հողի շերտերում Որտեղ նրանց կկարդան Դանդելիոնների և անմոռուկների արմատները:

10.04.24

ՊՈՆԶԻՎՅԻ ԴՐԱՆՏԱՅԻՆ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Պոեզիայի դրախտային թռչունները Թևահարում են ամբողջ Պոլիեզիայով մեկ

Չեղինակային իրավունքը նրանց Անաստան են Չավայներում Նրանց երգերը թռչում են Մինչև երկինք Սելեբես կղզու վրայով Խենթացնում են նրանց բառերը Սուևատրա և Յավա կղզիներին Նրանք նորածնության մեջ են Մաղազակարում Նրանց արժեքը թռչունների շուկայում անգին է Իսկ այստեղ հայրենի եզերքում Ես եմ գործ թռչունը երգում եմ:

ՉԻՆ ԳՐՔԵՐ

Չին գրքեր իմ ոչ վաղ երիտասարդության հիստ զուսպ կազմերով Վաթսունականների գրքեր Ութսունականների վերջի Այսպես կոչված քսաներորդ դարի Դեռ մեր դարաշրջանի Չանաշխարհային գրականության սերունդներ Որտեղ երբեմն թարթում է և իմ անունը Չելդերլին Նովալիս Ռիկե Ազնվացեղ ռեակցիոն ռոմանտիկներ Գերմանախոս որևէ երկրի բանաստեղծներ Չրատարակված ինչ-որ այլ Ռուսաստանում Ինչպե՞ս նրանք ապրեցին մինչև մեր օրերը Ինչքա՞ն համեստ են նրանք ապրում իմնա Եվ ինչպես են նրանք ապրելու մեզանից հետո Երբ գա Առանց մեզ երջանիկ մի ժամանակ:

07.03.2023

Ամեն բան պետք է ունենա իր սահմանները Եվ ծուղակը պետք է սահմանափակվի ծուղակով Բույնը բույնով պիտի սահմանափակվի Իսկ վերներումն ունյնիսկ երկնքով Որքը պետք է լցված լինի ծյունով Բայց կենդանի մարդու համար բնական սահմանափակումները քիչ են Նրան պետք է որ առանց դուռը թակելու չմտնեն իր տուն Որպեսզի իր գլխավերևում չքայլեն Եվ որպեսզի իր քայլող

ուղքերի տակ հողը չայրվի Եվ որպեսզի մեկ այլ մարդու տեսնելիս Նրա մեջ երկշոտ տագնապ չառաջանա Որ հանկարծ դա արդեն ծանոթ մեկն է Եվ նա կարող է հեշտությամբ նկատել իրեն Եվ դրանով իսկ ուղղակիորեն հարցնել Թե ինչու է նա այստեղ և ինչ է փնտրում այստեղ Դա լավագույն դեպքում իսկ վատագույն դեպքում Պարզապես անցնի նրա կողքով և չճանաչի Եվ ունյնիսկ ավելի վատ՝ կնկատի և կճանաչի Կանգ կառնի և կձևացնի Որ կարծես ուրախացել է Եվ կցանկանա սեղմել քո ձեռքը:

Թարգմանությունը՝ Սլավի-Ավիկ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԱՐԵՎԱՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



ՎԱՀՄՆ ԶՄՆՈՅԵԱՆ

ՊԱՐՏՈՒՈՂՆԵՐՈՒ ԴԵՏՔԵՐՈՎ

Այս հնալուծ կաշիին վրայ որուն համար մի ոմն գառ դարեր առաջ թափեց արիւն Յայտնուած է նոր հոլովոյթ պատմողական նոր բանաձեւ Յոն տեղ չկայ հեռու-մօտիկ մեր անցեալի հերոսները եւ փառքերը երգելու Կամ այսօրուան հոգի հիւժող կրօնատները ողբալու

Յոն տեղ չունին Սրբազան Լեռն Յորովելը

Եւ Կիլիկիան

Յոն տեղ չունին Ամարաք Ղաղիվանքը տժգոյն Շուշին

Յոն չեն յիշուիր ճակատները լուսապսակ հայ գինուորը կամաւորը եւ գիւղացին

որոնք կըսուի

որ կը զոհուին յանուն ոչինչի՝ Յոն տեղ չունի պատմութիւնը...

Յաշուարկուած է ամեն ինչ դիտումնաւոր մոռացումներ ծրագրուած անփութութիւն համատարած անշարժութիւն խոր քնախտի համաճարակ

Մոլորած է Լոյսը

Սրբավայրեր լեղապատառ կը մարտնչին զիրենք պատող բարքերէ զուրկ նոր երգերու գերակշռող շղարշին դէմ Վարձու կաւով քանդակուած անցեալէ զուրկ շինձու յուշեր կը ողողեն մատենաններ

Կոյր մուլուցքով դաւադրաբար կը բացուին չսպիացող թարախապատ հին վերքեր ու խորքեր դուրս կը բերուին օրուան յարմար մեղաւորներ պիտանի

Մոլորած է Բանը

Լռութիւնը ականի պէս լարուած պիրկ կըսպասէ կոկորդիս մէջ կուզէ պոռթկալ որտա՛լ

արթնցնել զանգուածները կործանել թակարդները...

Բայց գրիչս չի գտներ իր հոսքը

Ինչպէ՞ս փրկել վերջին շունչն այս տոհմիկ որ կը մնայ կառչած հանգոյցին այս յանձնուած երակներուն ու կը տենչայ վերապրիլ եւ հեւասպառ կը պաղատի կաղաղակէ՛ կը գլորուի ծոցիս մէջ

Ինչպէ՞ս կանգնիլ յաղթահասակ ու գրկաբաց դիմաւորել Վայոց Ձորը կեանքի կոչող արագիլները զարնան Օղը ճեղքող արագաւազ ծիծառները տուն դարձող

Ինչպէ՞ս ապրիլ այս լեռներուն խորքէն յորդող կեանքի յորձանքը յաւերժ Ինչպէ՞ս լսել այս սարերուն լանջերէն արծազանգող անլուելի սրտատրոփը հողին...

Մոլորած է Խաւարը

Յաւատքը չանհետիր մէկ ոստումով Յոյսը չի ցնդիր յանկարծակի Սէրը չի սառիր մէկ գիշերուան մէջ

Անոնք կը հեռանան դանդաղ Յերթով Իրարու ճամբայ տալով Մտածուած քայլերով Կապկելով կշռոյթը բորոտ ու կաղ այն գորշ գազանին թաթերուն որ ժամանակ առ ժամանակ ետ կը դառնայ եւ հեզնող չարակամ ժպիտը դունչին Կողմնակի նայուածքը պահ մը կուղղէ աչքերուդ ...ու կանցնի

Մոլորած է Ժամանակը

Խաւարամիտ լռութեան մէջ գիշերուան Յաւատքը սերն ու լոյսը կը հեռանան անձայն եւ ամբոխը չի զգար նոյնիսկ իրենց ետին տնտնացող բացն ահարկու չի զգատանար ու չընդվզիր չըմբոստանար կը յարմարի առանց հարցուփորձի կը հաշտուի առանց հասկնալու

Եւ ի վերջոյ երբ քանի մը սթափ մարդիկ խելքի գան սարսափահար կանդորդառնան որ արդէն որդեգրած են նորեւուկ արտօնեալներուն

շարադրած պատմութիւնը

...եւ հարց կու տան ո՞ւր է արդեօք

Ապրիլ 24, 2023 Վարդահովիտ



ՎԻՊԵՆ ՅՈՎՍԷ ՓԵԱՆ

ՅՈՅՍ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ

Ո՞ւր էիր դուն, կ'ըսեն՝ չկայիր, չկայիր գիշերուան լուռ աղմուկներուն մէջ, մինչ մեզ պատէ պատ կը զարնէին, սիրտի պատառներ կը խարկէին, երբ լիրբ ազնաւներու հանդէս էր, սուտ Կանտիներու տողանցք էր, ամեն կողմ՝ ամեն կողմ կեղծիք էր:

Ո՞ւր էիր դուն, կ'ըսեն՝ չկայիր, չկայիր այդ մութ ու ամենն սեւ պահերուն, երբ ճիւղը մանուկ սիրտեր կը պատռէր, մեր գինուորները կը պայթեցնէր, մեր ասպետները կ'առեւանգէր, մայրերու ճիչերը կը սպաննէր, կը խեղդէր, ու կը խեղդէր, քեզմէ զուրկ հոգիները կը քերթէր:

Ո՞ւր էիր դուն, կ'ըսեն՝ չկայիր, չկայիր, երբ ատամներով քու տեսակը կ'որոնէի, բանտի ամեն մէկ անկիւմին մէջ ամեն րոպէ, ամեն տեղ քեզ կ'որոնէի, երբ փոթորկած ու ալեկոծ հոգիով ծովու ամեն մէկ ալիքի, ամեն ալիքի ամեն մէկ պղպաքակին մէջ՝ շունչ մը, քեզմէ մշոյլ մը կը փնտռէի:

Ո՞ւր էիր դուն, երբ կը փնտռէի, լոկ անցեալ մը գտնելով, վառ անցեալը արագ խամրող, մինչ կային միայն ընկերներ դաւաճանող, կը փնտռէի աչքեր, որոնք մէջ կայ սեր կամ ժպիտ, մէկը՝ որ վիզիս պարանը թուլցնէ, մինչ կ'օրօրէին, կ'օրօրէին, մերթ կը խնամէին, մերթ կը շոյէին, յետոյ՝ քանի անգամ կը թաղէին:

Ո՞ւր էիր դուն, երբ անունիդ մէկ տառով միլիոն էջեր գրեցի, երբ յանուն քեզի հազար

վէպեր հիւսեցի, երբ անունովդ գրեցի երգեր՝ զորս մարտիկներ երգեցին, երբ գրեցի խօսքեր՝ զորս սիրահարներ շնչեցին, երբ գրեցի գիրքեր՝ զորս կեանքը դեռ պիտ' կարդայ, երբ գրեցի, գրեցի ու մեռայ գացի, որպէսզի ետ գամ ու դարձեալ քեզ գտնեմ, գտնեմ քեզ՝ յոյս յաւիտենական:

Յոյս յաւիտենական, որ թէ՛ սուտ ես, թէ՛ իրական, յոյս՝ որ դժոխքներ կը քանդէս, ու կեանքեր կը ծաղկեցնես, յոյս՝ որ կը խնամես, երկար կը համբերես, յոյս՝ որ հեշտագին կ'օրօրես, մոլեգին կը սիրես, յոյս՝ որ կը մնաս մօտս, երկար կը մնաս, ու մօտս մնալով՝ մէջիս մարդը մարդ կը պահես:



ՏԻՊՐԱՆ ԳՎԲՈՅԵԱՆ

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Այո Մարդկութեան Անդրմարդկութեան, այո ինչ կայ դուրսը մեր աշխարհէն, անջրպետէն, նոյնիսկ հոգիէն գատ, սեռուցքը, սերուցքը անոնց, կը կանչեն հիմա շատ բարձր, Յաջիփսուօթի պալատին քով, թագաւորներու ծորին մէջ: Եւ կեանքը, մեր կեանքը, մահկանացու կեանքը մերկ, նոյն այդ մահուան համար, որ չի գար ամեն վայրկեան, կը կանչեն բարձր, տաք արեւին տակ 47 աստիճանով, Լուսուրբէն-բուրգեր արեւմուտքէն-արեւելք: Ընտրութիւնը մէկն էր Թութին ու 5 մասական զմռուած չճնուածին, Փարաւորներէն երգն ու պարը տանելու մեր եւրոֆոնով, կը կանչեն ամենն հասարակ ընթրիքները մեր, Յայաստանէն դէպի ամեն տեղ, ընտրութիւններու շուքին տակ, կառոյցներէն-դամբարաններ տանող զաղտնարաններով: Կարմիր ծովին հետ՝ կապոյտ հոգի անյաւերժ, եւ անգոյն գոյատեսակաւորում, եւ անֆու կանչող միշտ,

ու արձաններ անասան մեր մէջ կանգնած ու մեզմէ դուրս: Կը կանչեն զմռուած սերմին դեռ չժայթած ու ոսկորները դեռ չկազմուած, զմռուած ոգիին տրամադրապաշտ զմռուած ոգիին հին ու նոր, օգնող-չօգնող ոգիին չտեսնուած աւագներով, երկիւքով ու յատակագիծերով:



ՆՈՐԱ ՊԱՐՈՒԹՅԵԱՆ

ՉԻՄԱՍ

պիտի քալեն փոշիները չհասկցուած ճամբաներու մայթերէն ու ոչ մէկը դիմացէն հարցումով մը պիտի դպնայ ուսերնուն պիտի տեսնեն բերանքսիվայր մրմռացող ցուլքերը ու ձայներուն ափերը՝ աղմուկներէն անջնացած կողպ կուրծքի արձանին տակ հով՝ պիտի շարժեն չորցած գնդիկները արիւնի անոնց սմբած ուղեղները այլեւս չեն գիտեր ե՞րբ սիրաբանիլն ու սիրելը նոյնն էին

հատիկ մը ազատութեան թաւալզուր ոտքերու տակ կը թռչկոտ հերոսացած ճուտիկի պէս ճվճվան լոյսին հանգիստը կ'աւրտ անէ՞ծքեր խինդըն անոր կը ծեծեն յօրանջի չափ սովորական ու յոգնակի տխրութիւնը մարդերուն ծանծաղիքէն խօսիլն անգամ մոռցած է կը մզմզան կը հայիոյն իրաւունքի ներբանին որմէ լեզու ելլել ու բարբառել կը սպասեն սկիզբ ընթացք ու վախճան զանազանել ալ չ'ըլլար չէր ալ եղած ինչո՞ւ այդպէս գրած են ճակտին վրայ անսահման խաբկանքի դաշտ տեսնելով այս բոլորին չիմաստը ինքնագոհ պատմութիւն մ'է բերնէ բերան երկնցած:

Էջը կազմեց Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 համբարական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլեկտրոնային Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 2 տպագրական մասնով